«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱԲՈՎՅԱՆԻ ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան _2023_

ՆԱԽԱԲԱՆ

Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջի (այսուհետ՝ ԱԲՊՔ, Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմում-հայտի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն՝ ուսանող է:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարությունը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է ԱԲՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....**Error! Bookmark not defined.**
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ..... 10
ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 14
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 14
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ..... 19
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 23
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 30
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 33
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 37
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 39
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 43
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ..... 46
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 49
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 52
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 53
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 54
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 56
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 59
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ..... 60
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 61

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) «Փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննության ընթացքում փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջի (այսուհետ՝ ԱԲՊՔ, Քոլեջ) առաքելությունն է՝ «. . .գիտելիքի և կարողության ձևավորումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, ստեղծագործական ներուժի պահպանումը, զարգացումը, ինչպես նաև գիտության, արվեստի, մշակույթի, սպասարկման և արհեստագործական ոլորտների բարձրորակ մասնագետների սերնդափոխության և շարունակականության ապահովումը» և բոլոր դատողություններն ու երզրակացություններն արել, հիմնվելով դրա վրա: ԱԲՊՔ-ն, առաքելությանն ու աշխատաշուկայի պահանջներին հավատարիմ, իրականացնում է 10 միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Դիզայն», «Գեղանկարչություն», «Դերասանական արվեստ», «Հաշվապահական հաշվառում», «Բանկային գործ» «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Զբոսաշրջություն», «Քույրական գործ» և 1 նախնական՝ «Խոհարարական գործ»: Նշված կրթական ծրագրերն իրականացվում են առկա ուսուցմամբ՝ վճարովի և անվճար հիմունքներով: Ներքին և արտաքին շահակիցների մոտ Քոլեջի առաքելության վերաբերյալ ընդհանրական պատկերացումը կա, որ ԱԲՊՔ-ն պետք է կաղրեր պատրաստի աշխատաշուկայի կարիքների բավարարաման և ուսանողի կրթության շարունակականությունն ապահովելու համար: Գործատուները կաղրերի պատրաստման տեսանկյունից կարևորում են քոլեջի դերը տարածաշրջանում, այդ թվում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում:

Քոլեջի նպատակները բավական հավակնոտ են՝ որակյալ դիմորդների ընդունում, կրթական ծրագրերի, լսարանների արդիականացում, նյութատեխնիկական բազայի համալրում, մտածողությամբ օժտված մասնագետների պատրաստում, որակի ապահովման համակարգի մշակում, ներդրում և զարգացում: Փորձաքննության ընթացքում

փորձագիտական խումբը համոզվել է, որ մի շարք նպատակներ Քոլեջն աստիճանաբար իրականացնում է, մյուսները դեռևս մնում են անիրականանալի։

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ Քոլեջը վերջին տարիներին հստակեցրել է իր առաքելությունը, բարելավել է շենքային պայմանները, ստեղծել է ուսանողության համար բարենպաստ կրթական միջավայր։ Իր նպատակներին համահունչ սկսել է ավելի մեծ ուշադրություն դարձնել ոչ միայն ուսանողական համակազմի քանակին, այլ նաև որակին։ Արտաքին շահակիցները որպես մրցակցային առավելություն քոլեջի համար նշում էին առավել բարձր առաջադիմությամբ սովորողների ընդունումը, ուսումնառության նշաձողի աստիճանական բարձրացումը։

Փորձագիտական խումբը բախվեց հակասական իրավիճակի, երբ Քոլեջի կառավարող մարմինները հաջողություն ունենալով մեծ խնդիրների լուծման հարցերում, պատշաճ ուշադրություն չէին դարձնում ներքին կառավարաման հարցերին։ Դրա հետևանքով քոլեջում բացահայտվեցին խնդիրներ, որոնք կառավարաման արդյունավետության բարձրացման դեպքում չէին լինի։

Այսպես, Քոլեջի կրթական ծրագրերի արդյունավետությունը միանման չէ։ Կան կրթական ծրագրեր, օրինակ՝ «Դիզայն», «Գեղանկարչություն», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ», որոնք իրականացվում էին ավելի բարձր արդյունավետությամբ։ Այդ ծրագրերում ընդգրկված և դասախոսները, և ուսանողները առավել մոտիվացված էին և միտված որակի բարձրացմանը։ Այդ ծրագրերի արդյունավետությունը բացատրվում է լավ դասախոսական կազմով, դասավանդման տարաբնույթ մեթոդներով, վերջնարդյունքահեն հանձնարարականներով։ Դրանց կողքին կային մասնագիտություններ, օրիկան, «Բանկային գործը», որի գնահատման ընթացքում փորձագետները բացահայտեցին մի շարք խնդիրներ։ Փորձագետները կառավարման թույլ կողմերից համարեցին այն, որ դրական փորձը չի գնահատվում և չի տարածվում մյուս ծրագրերի վրա։

Քոլեջն ունի բազմազան և հարուստ արտաքին կապեր, սակայն միջազգայնացմանը միտված քայլեր դեռևս չեն ձեռնարկվում։ Արտաքին կապերի շնորհիվ քոլեջը հասել է նյութատեխնիկական բազայի և կրթական միջավայրի բարելավման։

Որակի ապահովման համակարգը սաղմնավորման փուլում է, չկան մշակված մեխանիզմներ և գործիքներ, բարելավումը իրավիճակային է և ոչ թե հստակ պլանավորված։ Ավելի Քոլեջի ղեկավարությունը և դասախոսական կազմը հստակ պատկերացում որակի ապահովման համակարգի վերաբերյալ չունեն, ՊԻԳԲ շրջափուլը մասամբ գործում է միայն որոշ ՄԿԾ-ների դեպքում։

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Ռազմավարության մեջ Քոլեջի առաքելության ու նպատակները հստակ են ձևակերպված։
2. Իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանությունը բազմագործառութային քոլեջի բնութագրին։

3. Մոտիվացված, գործին նվիրված, մասնագիտական բարձր որակավորումներ ունեցող դասախոսական կազմի առկայությունը:
4. Ուսանողների համար բարենպաստ կրթական միջավայրի ձևավորումը և ուսանողակենտրոն քաղաքականության իրականացումը:
5. Շենքային պայմանների և ռեսուրսային բազայի շարունակական բարելավումը:
6. Արտաքին հարուստ կապերի առկայությունը միտված ուսումնառության միջավայրի բարելավմանը:
7. Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ իրականման նպատակով գործատուների ռեսուրսային բազայի օգտագործումը:

Հաստատության թույլ կողմերն են.

8. Ռազամավարական կառավարման բացակայությունը, կարճաժամկետ պլանավորման անհամապատասխանությունը ՌԾ-ին:
9. Կառավարման համակարգում անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ ներգրավելու համար ֆինասական ռեսուրսների անբավարարությունը:
10. ՄԿԾ-ների կառավարման գործընթացում բացթողումների առկայությունը:
11. Հաշվետվողականության լավ մշակված համակարգի բացակայությունը:
12. Հետազոտության ոլորտում հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը:
13. Գործունեության թափանցիկության պակասը:
14. Ներքին և արտաքին շահակիցների քոլեջում իրականացվող: քաղաքականության վերաբերյալ ցածր իրազեկվածությունը:
15. Կրթության միջազգայանացման ոլորտում հավակնություններ բացակայությունը:
16. Որակի ներքին ապահովման համակարգի բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Ներդնել ռազմավարական ծրագրի արդյունավետությունը գնահատող ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ապահովելով իրականացման մշտադիտարկումը:
2. Ռազմավարության գնահատումը համադրել ներքին և արտաքին շահակիցների քարտեզագրված կարիքների հետ:

Կառավարումն ու վարչարարությունը

3. Մշակել և ներդնել Ռազմավարության իրականացման պլան ժամանակացույցը՝ հստակ նշված վերջնարդյունքներով, կատարման առանցքային ցուցիչներով, պատասխանատուներով և ժամանակացույցով:

4. Բոլոր ստորաբաժանումների կարճաժամկետ պլանավորումը իրականացնել ՌԾ-ի պլան ժամանակացույցի հիման վրա։
5. Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար ստեղծել տվյալների բազա, ինչը հնարավորություն կտա մշտադիտարկել կառավարման արդյուանվետությունը։
6. Մշակել և ներդնել որոշումների կայացման վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների իրազեկությունը բարձրացնելու կայուն մեխանիզմներ։
7. Հստակեցնել ստորաբաժանումների ղեկավարների գործառույթները։

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. Ընդհանրացնել և տարածել քոլեջի որոշ մասնագիտություններում առկա լավ փորձը՝ նպաստելով բոլոր ՄԿԾ-ների վերջնարդյունքներով նախատեսված կարողությունների և հմտությունների ձևավորմանը։
9. Ներդնել գնահատման բազմագործոնային համակարգ՝ տարածելով բոլոր ՄԿԾ-ի վերջնարդյունքների վրա։
10. ՄԿԾ-ների բարելավման համար պլանավորել և իրականացնել բենչմարքինգ։
11. Մասնագիտությունների ուսումնական պլաններում ներդնել ընտրովի դասընթացներ, հաշվի առնելով գործատուների կարիքները։
12. Ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման, վերանայման գործող համակարգային և կանոնակարգված մեխանիզմներ՝ նպաստելով ՄԿԾ-ի շարունակական բարելավմանը։

Ուսանողները

13. Դպրոցներում ներդրվող մասնագիտական կողմնորոշման նոր հնարավորությունների հաշվառմամբ լրամշակել դիմորդների հավաքագրման մեխանիզմները։
14. Ակտիվացնել կարիերայի կենտրոնի աշխատանքը՝ պլանավորելով այն և ներդնելով պլանների իրագործման և բարելավման հստակ մեխանիզմներ։
15. Բազմազանացնել ուսանողների իրավունքների պաշտպանությանն ուղղված մեխանիզմները, տեսանելի դարձնելով Ուսանողական խորհրդի դերը։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

16. Ներդնել դասախոսական կազմի գնահատման արդյունավետ մեխանիզմներ՝ միտված աշխատանքների բարելավանը։
17. Ներդնել դասախոսական կազմի կարիքների բացահայտման, վերհանման, գնահատման մեխանիզմներ՝ միտված մասնագիտական առաջընթացին և զարգացմանը։

18. Միջոցառումներ ձեռնարկել դասախոսական կազմի կայունության ապահովվածության ուղղությամբ՝ ստեղծելով կադրերի ռեզերվ:
19. Հստակ սահմանել և արդյունավետ բաշխել վարչական կազմի գործառույթները՝ միտված ռազմավարական նպատակների արդյունավետ ապահովմանը:

Հետազոտությունը և զարգացումը

20. Հստակ սահմանել հետազոտության հավակնություններն ու ուղղությունները, ընթացակարգեր՝ քոլեջի առանձնահատկություններին և ՄԿԾ-ներին համահուն:
21. Ներդնել դասախոսներին և ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմներ՝ միտված մասնագիտական առաջընթացին և զարգացմանը:
22. Բոլոր ՄԿԾ-ներում ներդնել վերլուծական, հետազոտական բաղադրիչը սովորողներին տրվող հանձնարարականներում:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

23. Մշակել և ներդնել ֆինանսների դիվերսիֆիկացման մեխանիզմներ՝ եկամտի կայուն աճ ապահովելու նպատակով:
24. Բարելավել գրադարանային ենթակառուցվածքը՝ համալրելով մասնագիտական և թվայնացված գրականությամբ:
25. Ստեղծել համապատասխան կահավորմամբ բնագիտական լաբորատորիաներ:
26. Բարելավել Քոլեջում տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացները:
27. Մշակել գործիքակազմ և իրականացնել ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատում:

Հասարակական պատասխանատվությունը

28. Մշակել և ներդնել հաշվետվողականության այնպիսի քաղաքականություն, որը կապահովի տեղեկատվության փոխանցումը ոչ միայն ներքևից վերև, այլ նաև վերևից ներքև, հաշվետվություններում ներդնելով վերլուծական բաղադրիչ:
29. Ներդնել հասարակությանը գիտելիքի (արժեքների) և տեղեկատվության փոխանցման մեխանիզմներ:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

30. Մշակել արտաքին կապերի հստակ քաղաքականություն /ընթացակարգեր՝ միտված արտաքին համագործակցության կանոնակարգվածության և կայունության ապահովմանը:

31. Քայլեր ձեռնարկել միջազգային փորձի ուսումնասիրության և ուսումնական հաստատությունների հետ կապերի հաստատման ուղղությամբ՝ քոլեջի կրթական ծրագրերին համահունչ:
32. Քայլեր ձեռնարկել դասախոսական կազմի և ուսանողության օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Որակի ներքին ապահովման համակարգը

33. Հստակեցնել որակի ապահովման համակարգի առաքելությունը, նպատակները և գործառույթների շրջանակը՝ ապահովելով համապատասխան կանոնակարգերի մշակումը:
34. Մշակել և իրագործել տվյալների հավաքագրման մեխանիզմներ՝ ապահովելով ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը մեխանիզմների կիրառման ժամանակ:
35. Ապահովել որակի պատասխանատուի մասնագիտական աճը որակի ապահովման ոլորտում՝ նպաստելով որակի ներքին համակարգի ներդրմանը և որակի մշակույթի ձևավորմանը:
36. Ներդնել Քոլեջում իրականացվող գործընթացների տվյալների հավաքագրման, արդյունավետության գնահատման և վերլուծությունների մեխանիզմներ՝ հիմնվելով ՊԻԳԲ շրջափուլի վրա:
37. Ներդնել հուսալի մեխանիզմներ, որոնք Քոլեջի որակի ապահովման գործընթացների վերաբերյալ շահակիցների շրջանում կապահովեն թափանցիկություն և հրապարակայնություն:

Ամսաթիվ՝ 29.11.2023 թ.

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Լիլիթ Զաքարյան**, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Լիլիթ Աբելյան,** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
3. **Մարինե Գալուբյան**, «Սանարե-ֆարմ» ՍՊԸ, հաշվապահ, փորձագիտական խմբի անդամ:
4. **Ռոբերտ Գրիգորյան,** Հայաստանում ֆրանսիական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քարտուղարության բաժնի մասնագետ **Լիլիթ Ղազարյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և գործընթացի համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԱԲՊՔ–ն 10.01.2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափին համապատասխան դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (27.01.2023թ.) ԱԲՊՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ԱԲՊՔ–ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել ՄՈՒՀ-ի հետ: Աշխատաժողովները նպատակ են ունեցել նախապատրաստել քոլեջներին հավատարմագրման գործընթացի կազմակերպման փուլերին: Աշխատաժողովները տեղի են ունեցել 2023թ. փետրվարի 21-22-ը և մարտի 3-4-ն ընկած ժամանակահատվածում, որոնց մասնակցել են ՄՈՒՀ-ի աշխատակիցներ: 4-օրյա աշխատաժողովներին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները, ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմելու համար լրացվող էլեկտրոնային հարցաշարը, ինքնավերլուծության ու SWOT վերլուծության իրականացման առանձնահատկությունները և կապը չափորոշիչների հետ:

Ուսումնական հաստատությունն իրականացրել է SWOT վերլուծություն, որը քննարկվել է ՈԱԱԿ աշխատակիցների հետ:

ԱԲՊՔ-ն ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը ներկայացվել է 17.07.2023թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 4 աշխատակիցների կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները չեն մասնակցել: Յուրաքանչյուր չափանիշ վերլուծվել է քոլեջի աշխատակցի կողմից՝ հաշվի առնելով աշխատանքային ուղղվածությունը և չափանիշի պահանջները: Ինքնավերլուծությունը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, ինչը հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակի մասին:

Նախապատրաստական փուլ

ԱԲՊՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր Քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,

4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակրգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, մասնագիտական հանդիպումներ և այլն: Մասնագիտական հանդիպումների ընթացքում փորձագիտական խումբը բաժանվում է՝ յուրաքանչյուր փորձագետ ըստ իր ուղղվածության: Յուրաքանչյուր փորձագետ (բացի ուսանող փորձագետից, նա միացել է մյուս փորձագետներից մեկին) հնարավորություն է ունեցել առանձին մասնագիտական հանդիպումներ ունենալ Քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրում դասավանդող դասախոսների, կրթական ծրագրի պատասխանատուի և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

Նախանական այց

Հաշվի առնելով այն փաստը, որ ԱԲՊՔ-ն գտնվում է Կոտայք մարզում՝ Քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց՝ փորձագիտական այցից առաջ: Հանդիպմանը ներկա են եղել ՈԱԱԿ համակարգողը, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը և փորձագիտական խմբի ղեկավարը: Հանդիպման ընթացքում Քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. սեպտեմբերի 18-21-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (17.08.2023թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել Քոլեջի ուժեղ և թույլ կողմերն ըստ չափորոշիչների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է Քոլեջի տնօրենի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ մասնակիցներն ընտրվել են պատահականության սկզբունքով նախօրոք տրամադրված ցանկից: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների և պրակտիկայի վայրերի դիտարկում և ֆոկուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ նոյեմբերի 19-ին, որը տրամադրվել է քոլեջին 21.11.2023 թ.: Քոլեջը նախնական զեկույցի վերաբերյալ դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 29.11.2023թ. և տրամադրվել քոլեջին:

Համակարգողի ստորագրությունը

29.11.2023թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն**. «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի պատմությունն սկիզբ է առնում 1983 թվականից, երբ համաձայն ՀԽՍՀ 08.05.1983 թ. թիվ. 296 որոշման՝ Երևանի ավտոճանապարհային տեխնիկումը վերանվանվել է Աբովյանի ավտոճանապարհային տեխնիկում, այնուհետև, ՀՀ կառավարության 26.06.1992 թ. թիվ 366 որոշման համաձայն՝ Աբովյանի պետական ճարտարագիտական քոլեջ, ՀՀ ԿԳ նախարարի 05.05.2014 թ. թիվ 470-Ա/Ք հրամանի համաձայն՝ «Աբովյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ: ՀՀ կառավարության 23.04.2020 թ. թիվ 620-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ «Աբովյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը և ՀՀ ԿԳՄՄՆ «Աբովյանի թիվ 1 արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ը միավորվելով վերակազմակերպվել են որպես «Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ»: Քոլեջի առաջին առաքելությունը ձևակերպվել է 2014 թ., հիմնականում որպես մշակութային քոլեջի առաքելություն, 2021 թ. ձևակերպվել է Քոլեջի նոր առաքելությունը, որը համահունչ է քոլեջի բազմագործառութային բնութագրին:

2. **Կրթություն. Կրթական ծրագրեր:** Կոտայքի մարզում Քոլեջը կադրեր է պատրաստում շատ տարբեր ոլորտների համար հետևյալ մասնագիտությունների ուղղությամբ՝ «Հաշվապահական հաշվառում», «Բանկային գործ» «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Զբոսաշրջություն», «Քույրական գործ» և «Խոհարարական գործ»:

Դասախոսական կազմ: Ներկայումս քոլեջում աշխատում է 61 դասախոս, որոնցից 46-ը հիմնական աշխատողներն են, 15-ը՝ համատեղությամբ: Դասախոսներն ունեն համապատասխան մասնագիտական որակավորում: Ներգրավված են նաև մասնագիտական ոլորտում աշխատող դասավանդողներ: Ֆինանսական դժվարությունների պատճառով որոշ մասնագիտությունների գծով կա կադրերի և նյութական ռեսուրսների պակաս, որը քոլեջը փորձում է հաղթահարել գործատուների հետ համագործակցությամբ: Դրա հետ մեկտեղ որոշ պահանջված մասնագիտությունների գծով Քոլեջը վերջին երեք տարիներին ընդունելություն չի իրականացրել հաշվի առնելով մասնագետների պակասի խնդիրը, ինչը ռիսկային է համարում որակյալ կրթության ապահովման տեսանկյունից:

Դասավանդում-ուսումնառություն: Տարբեր մասնագիտական կրթական ծրագրերում Քոլեջում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները տարբեր են: Ավանդական դասախառոսությունների կողքին կան մեթոդներ, որոնք ուղղված են կարողությունների և հմտությունների ձևավորմանը, առավել ներառական են և ուսանողակենտրոն: Այդ մեթոդներով դասավանդող դասախոսների շնորհիվ Քոլեջի **կրթական միջավայրը** բավական գրավիչ է ուսանողների համար, նպաստում է նրանց մոտիվացմանը, առաջադիմության ցուցանիշների բարելավմանը և ստեղծագործական մտքի

և քննադատական մտածողության ձևավորմանը: Ուսանողակենտրոն ուսուցման շնորհիվ ինչպես ուսանողներից մեկն արտահայտվեց՝ ուսանողներին սովորեցնում են սիրել սովորելը:

3. **Հետազոտություն:** Քոլեջը դեռևս չի հստակեցրել թե ինչ է հետազոտությունն իր համար: Հետազոտությունը Քոլեջի գերակա ուղղություններում չի նշվում, հանձնարարականների համար հետազոտության բաղադրիչը չի կարևորվում, կրթության և հետազոտության կապի ինստիտուցիոնալ մեխանիզմները բացակայում են: Դրա հետ մեկտեղ կան առանձին դասախոսները, որոնք հետազոտությունը դիտելով մասնագիտական աճի կարևոր պայման, ներառում են այն դասավանդման մեթոդներում և ուսանողների հանձնարարություններում:

4. **Արտաքին կապեր:** Քոլեջն ունի հարուստ արտաքին կապեր, կարողանում է համագործակցել այնպիսի գործընկերների հետ, որոնց շնորհիվ ֆինանսական սուղ պայմաններում ուսումնառության համար ապահովում է անհրաժեշտ ռեսուրսներ, կազմակերպում է ուսանողների ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաները: Արտաքին կապերի շնորհիվ ԱԲՊՔ-ն բարելավում է շենքային պայմանները և նյութատեխնիկական ռեսուրսները: Քոլեջը միջազգայնացման ուղղությամբ հավակնություններ չունի:

5. **Որակի ապահովում:** Թեպետ որակի ապահովման համակարգի ներդնումն ու զարգացումը Քոլեջի ռազմավարական նպատակներից է, սակայն այն դեռևս սաղմնավորման փուլում է՝ չկան հաստատված և փորձարկված մեխանիզմներ և գործիքներ, որակի ապահովման վերաբերյալ իրազեկվածությունը ցածր է:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: Քոլեջը առաջնորդվում է 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրով (ՌԾ), որը հաջորդել է 2014-2019 թթ. ռազմավարական ծրագրին: Առկա է տնօրենի ընտրությունից առաջ ներկայացրած 2021-2026 թթ. Զարգացման ծրագիրը, որի հիման վրա մշակվել է Քոլեջի ռազմավարական ծրագիրը: 2014-2019թթ. ՌԾ-ում ընդգծվում էր քոլեջի մշակութային ուղղվածությունը և նշվում, որ քոլեջը կոչված է իրականացնել «Մշակութային դաշտում բարձրորակ մասնագետների սերնդափոխության և շարունակականության ապահովումը»: 2021-2026 թթ. ՌԾ-ում առաքելությունը փոփոխվել է և համապատասխանեցվել բազմագործառութային քոլեջի բնութագրին: Այն ներկայացնում է քոլեջը որպես գիտելիք ձևավորող և տարածող և կարևորում «գիտության, արվեստի, մշակույթի, սպասարկման և արհեստագործական ոլորտների» համար մասնագետների պատրաստումը:

Քոլեջը կրթական ծրագրեր է իրականացնում ՈԱՇ-ի 2 մակարդակներում՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական:

Նպատակնեում քոլեջը կարևորում է .

- որակյալ դիմորդների ընդունումը
- կրթական ծրագրերի արդիականացումը
- քոլեջի կառավարման գործընթացում ուսամնողների ներգրավումը
- քոլեջի դասախոսական կազմի պատրաստման և վերապատրաստման արդյունավետության բարձրացում
- լսարանների արդիականացումը, նյութատեխնիկական բազայի համալրումը
- քոլեջի գործունեության արդյունքների հաշվետվության ապահովումը
- կիրթ, բազմակողմանի հետաքրքրություններ ունեցող, անհատական

մտածողությամբ օժտված մասնագետների պատրաստում

- որակի ապահովման համակարգի մշակում, ներդրում և զարգացում:

Փորձագիտական այցի ժամանակ ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ շահակիցների մոտ Քոլեջի առաքելության վերաբերյալ կան ընդհանրական պատկերացում՝ ԱԲՊՔ-ն պետք է կադրեր պատրաստի 2 նպատակով՝ աշխատաշուկայի կարիքների բավարարաման և ուսանողի կրթության շարունակականությունն ապահովելու համար: Գործատուները կադրերի պատրաստման տեսանկյունից կարևորում են քոլեջի դերը տարածաշրջանում, այդ թվում՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ոլորտում: Փորձագիտական այցից և արտաքին շահակիցների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավարությունը

զգայուն է աշխատաշուկայի կարիքների նկատմամբ և նախաձեռնում է այն մասնագիտությունների բացումը, որոնց նկատմամբ տարածաշրջանում առկա է մեծ պահանջարկ։

Քոլեջը կարևորում է և քայլեր է ձեռնարկում ուսանողակենտրոն միջավայրի ստեղծման, ուսման մատչելիության ապահովման համար։ Քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջի ապագան կապվում է մարզի և համայնքի մշակութային զարգացման դինամիկայի, աշխատաշուկայի պահանջների, միջազգային միտումների հետ։ Քոլեջը պլանավորել է հրաժարվել շուկայում պահանջված մի քանի մասնագիտություններից՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Քույրական գործ»։

Հետևելով իր ռազմավարական նպատակներին քոլեջի ղեկավարությունը բարելավում է լսարանային պայմանները և նյութատեխնիկական բազան, չնայած ֆինանսական սուղ պայմաններին, քոլեջի ղեկավարությունը չի բարձրացնում ուսանողների վարձավճարները, ապահովելով ռազմավարությամբ խոստացված կրթության մատչելիությունը։

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման մեխանիզմը հաշվետվողականությունն է։ Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ստորաբաժանումները հաշվետվություններ են ներկայացնում կատարած աշխատանքների մասին։ Հաշվետվություն է ներկայացնում նաև փոխտնօրենը և կարիերայի կենտրոնի պատասխանատուն։ Տնօրենը տավա վերջում հաշվետվություն է ներկայացնում կառավարման խորհրդին։ Հաշվետվությունները տեղեկատվություն են ապահովում իրականացված աշխատանքներ վերաբերյալ ։ Առաքելության ու նպատակների իրականացման այլ հաստատված ինստիտուցիոնալ մեխանիզմներ չկան։

Դատողություններ: Քոլեջի ՌԾ-ում ձևակերպված առաքելությունը, քոլեջի տեղի և դերի վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների հնչեցրած կարծիքները հաստատում են, որ կա ձևավորված ընդհանրական պատկերացում՝ քոլեջը պետք է կադրեր պատրաստի ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներում՝ տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարաման համար և ուսանողի կրթության շարունակականությունն ապահովելու համար։ Քոլեջի հին և գործող ռազմավարական ծրագրերի համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ կա ռազմավարական մոտեցումների աստիճանական բարելավում՝ նոր ռազմավարությունը թե՛ առաքելության, թե՛ նպատակների ձևակերպման առումով ավելի ամբողջական է և հստակ, քանի որ բացի մշակութային ոլորտից պլանավորում է կադրեր պատրաստել աշխատաշուկայի կարիքներից ելնելով ամենատարբեր ոլորտների համար՝ հաշվապահության, բանկային գործի, զբոսաշրջության, խոհարարական գործի, տարբեր կազմակերպություններում գործավարության և այլն։ Առաքելության մեջ հատկապես շեշտադրված է մշակութային ոլորտի սպասարկման համար կադրերի պատրաստումը, ինչը արտահայտում է տնօրենի և մշակութային ոլորտի աշխատակիցների հատուկ մոտեցումը մարզում ոլորտի զարգացման անհրաժեշտության մասին։ Դատելով մշակութային ոլորտի

մասնագիտություններում («Դիզայն», «Գեղանկարչություն») ուսանողների թվաքանակի աճի փաստերից, կարելի է եզրակացրել, որ չնայած Երևանին մոտ գտնվելու հանգամանքին, դրանց պահանջը մարզում իրոք մեծ է: Քոլեջը զգայուն է նաև այլ շահակիցների կարիքների նկատմամբ: Այսպես, քանի որ համայնքում կան ձեռնարկություններ, որոնք նախնական մասնագիտական որակավորմամբ կադրերի պակաս ունեն, քոլեջը բացել է և նախատեսում է բացել նախնական մասնագիտական նոր մասնագիտություններ («Ոսկերչություն», «Ադամանդագործություն»): Այսինքն քոլեջի գործունեությունը կնպաստի աշխատաշուկայի կարիքներին համահունչ մասնագետների պատրաստմանը:

Քոլեջը հավատարիմ է ՌԾ-ում նշված նպատակներին և ծավալում է այնպիսի գործունեություն, որը աստիճանաբար հանգեցնում է դիմորդների և ուսանողների որակի բարձրացմանը: Աբովյան համայնքում կան մասնագիտություններ, որ համայնքում պահանջված են, օրինակ «Քույրական գործ» մասնագիտությունը և ցանկության դեպքում դիմորդների պակաս քոլեջը չի ունենա, չնայած դրան, քոլեջը հավատարիմ մնալով կադրերի որակի բարձրացման նպատակին, որոշել է հրաժարվել դրանից՝ դասավանդող մասնագետ չունենալու և անհրաժեշտ որակը ապահովելու անհնարինության պատճառով: Երևանին մոտ գտնվելու պատճառով այդ մասնագիտությամբ սովորել ցանկացողները ուսումը շարունակում են մայրաքաղաքում: Նույնը վերաբերվում է «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մանսագիտություններին: Քոլեջը՝ ցածր աշխատավարձերի հետևանքով, դժվարանում է որակյալ կադրեր ներգրավել դասավանդմանը:

Քոլեջում բացակայում են ռազմավարական նպատակների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմները: Ռազմավարական նպատակները իրականացվում են դասախոսական և վարչական կազմի նվիրված աշխատանքի շնորհիվ:

Արտաքին շահակիցների հետ կապերը հիմնականում ապահովվում են քոլեջի տնօրենի անձնական կապերի շնորհիվ, ինչը քոլեջի համար ռիսկային է այն առումով, որ տնօրենի փոխվելու դեպքում, դրանք կարող են պակասել:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են բազմագործոնային քոլեջի առաքելությանը, իրականացվող մասնագիտությունները համահունչ են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին, քոլեջը զգայուն է աշխատաշուկայի կարիքներին և նոր մասնագիտություններ է ներդնում դրանց հաշվառմամբ, փորձագիտական խումբը գտնում է որ ԱՏՊՔ-ն բավարարում է Չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Հաստատության կառավարումը կանոնակրգվում է հետևյալ կարգերով և փաստաթղթերով՝ «Կառավարման խորհրդի կանոնակարգ», «Հաշվապահական կանոնակարգ», «Մանկավարժական խորհրդի կանոնակարգ», «Կարիերայի կենտրոնի կանոնակարգ», «Որակի ներքին ապահովման կանոնակարգ», «Գնահատման կարգ», «Դասալումների ընթացակարգ», «Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պաշտոնեական հրահանգ», «Վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պաշտոնեական հրահանգ», «Ուսումնական և հանրակրթական առարկաների բաժնի վարիչի պաշտոնեական հրահանգ», «Ուսումնառության ներքին կարգապահական կանոններ», «Մանկավարժական աշխատողների իրավունքներն ու պարտականությունները»: Ուսխորհուրդը որպես ինքնակառավարվող մարմին ևս ունի կանոնակարգ:

Ըստ «Ներքին գնահատման տեղեկանք» փաստաթղթի քոլեջի կառավարման մարմինները բաժանված են երեք մակարդակի՝

1. Բարձրագույն մակարդակ՝ Քոլեջի ղեկավարությունը, որը ներառում է Քոլեջի խորհուրդը, տնօրենին, տնօրենի տեղակալներին և գլխավոր հաշվապահին,
2. Միջին մակարդակ՝ վարչական բլոկը, որը ներառում է բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին (գրադարան, կադրերի բաժին, ուսումնական մաս, ուսումնականա արհեստանոցներ, տնտեսական մաս, կարիերայի կենտրոն, կրթության որակի պատասխանատու)
3. Կառուցվածքային սխեմային հիմքը՝ բոլոր դասախոսներն են ու աշխատակիցները, որոնք անմիջական իրականացնում են ուսումնական գործընթացը»:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ներկայացված փաստարկները արդյունավետ կառավարման, անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայության վերաբերյալ չեն համապատասխանում իրականությանը: Քոլեջի կազմակերպական կառուցվածքում և հաստիքացուցակում (01.03.2023) առկա են անհամապատասխանություններ: Կառուցվածքում նշված է վարչատնտեսական գծով փոխտնօրեն, սակայն հաստիքացուցակում այդ հասիքն առկա չէ: Կան հաստիքներ, որոնք արտացոլված չեն կառուցվածքում: Օրինակ՝ մեթոդիստ, բուժքույր, լաբորանտ, տնտեսվար, զինղեկ և ՔՊ շտաբի պետ: Գլխավոր հաշվապահը, կադրերի տեսուչը, գրադարանը, վարչական կազմը ներկայացված է վարչատնտեսական գծով փոխտնօրենի անմիջական ենթակայության ներքո: Մինչդեռ՝ համաձայն «Գրադարանի կանոնակարգի»՝ գրադարանավարը անմիջականորեն ենթարկվում է տնօրենին: Հաստիքացուցակում գրադարանավար չկա: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ

հաստիքների բացակայությունը բացատրվում է ֆինանսական ռեսուրսների սղությամբ, նույն պատճառով, որոշ աշխատող հաստիքներ գերծանրաբեռնված են: Նույնը վերաբերվում է դասախոսական կադրերին՝ ֆինանսական սղության պատճառով քոլեջը չի կարողանում հրավիրել բարձրակարգ մասնագետներ, ինչի հետևանքով որոշ մասնագիտություններ փակման եզրին են:

Քոլեջն ունի 6 ամբիոն՝ «Ընդհանուր հումանիտար, հասարակագիտական, բնագիտամաթեմատիկական առարկաներ», «Մշակույթի ոլորտ», «Տնտեսագիտական և սոց.ծառայությունների մատուցման», «ՏՏ ոլորտ», «Առողջապահության և սոց.պաշտպանության, արհեստագործական ոլորտ»: Ամբիոնի վարիչները աշխատում են հասարակական հիմունքներով:

Վերջին տարիներին քոլեջի ղեկավարությունը մեծ ջանքեր է ներդնում կրթական միջավայրի բարելավման և որակավորման արժանահավատությունը ապահովող նյութական ռեսուրսների համալրման ուղղությամբ: Այդ ուղղությամբ քոլեջն ունի որոշ ձեռքբերումներ՝ բարելավվել են շենքային պայմանները, հարստացվել է ռեսուրսային բազան, բարեկարգվել է քոլեջի բակային հատվածը:

Կառավարմանը վերաբերվող կարգերը հաստատում են, որ քոլեջում կան մեխանիզմներ, որոնք հնարավորություն են ընձեռում, որ դասախոսներն ու ուսանողները մասնակցեն որոշումների կայացմանը: Կառավարման խորհրդի կազմում ընդգրկված են դասախոսներ և ուսանողներ: Համաձայն ինքնավերլուծության՝ Ուսանողական խորհրդի բարձրացված հարցեր Կառավարման խորհրդի քննարկման են ներկայացվում անդամ ուսանողների միջոցով: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ կառավարման մարմինները հասանելի են ուսանողների համար և նրանք կարողանում են իրենց կարծիքը հասցնել կառավարման վերին օղակներին:

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջի կառավարման հետ կապված խնդիրների քննարկման, կառուցողական մթնոլորտի ձևավորման նպատակով որակի ապահովման պատասխանատուի (ՈԱՊ-ի) կողմից պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ ուսանողների և դասախոսների հետ, որտեղ յուրաքանչյուրը հնարավորություն ունի բարձրացնել իրեն հուզող հարցերը, արտահայտել տեսակետներ, կատարել առաջարկություններ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարբերաբար հանդիպումների վերաբերյալ ապացույցներ չտրամադրվեցին: Դասախոսները մասնակցում են քննարկումների Մանկավարժական խորհուրդում և ցիկլային հանձնաժողովներում, բարձրաձնելով իրենց հուզող հարցերը:

ՌԾ-ում կան հռչակված նպատակներ և խնդիրներ, սակայն բացակայում է Ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցը, ինչը մեծապես դժվարացնում է միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումը: Քոլեջի յուրաքանչյուր ստորաբաժանում տվյալ ուսումնական տարվա համար մշակում և պլանավորում է իր աշխատանքային գործունեությունը, սակայն պլանավորումը տարեց տարի նույն է և չի արվում ըստ ՌԾ նպատակների և խնդիրների: Կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումների մշտադիտարկման հստակ մեխանիզմները բացակայում են, առկա չեն

վերլուծություններ, թե ինչպես է իրականանում քոլեջի սահմանած նպատակների իրականացման արդյունքների գնահատումը։

Ըստ ԱԲՊՔ ինքնավերլուծության՝ ղեկավարությունը քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կատարում է հենվելով փոխտնօրենների տարեկան հաշվետվությունների, ուսանողների առաջադիմության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների, դասալսումների արդյունքների, արտաքին և ներքին շահակիցների հետ հանդիպումների հիման վրա։ Հաշվետվությունների ուսումնասիրումը ցույց տվեց, որ դրանք վերլուծական չեն, գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվություններ չեն պարունակում։

Քոլեջի ԻՎ-ում նշվում է, որ վարչարարությունն իրականացվում է ՊԻԳԲ շրջափուլով, Քոլեջի գործունեության գնահատումը արվում է Կառավարման խորհրդի կողմից՝ տնօրենի տարեկան հաշվետվության հիման վրա, փոխտնօրենի և կարիերայի կենտրոնի պատասխանատուի հաշվետվություններով։ Փորձագիտական խմբի հանդիպումները տարբեր խմբերի շահակիցների հետ ցույց տվեցին, որ կարճաժամկետ պլանավորումը կրում է իրավիճակային բնույթ, հենվում է տարվա սկզբի կարիքների վերհանման վրա և չի բխում ՌԾ-ից։ Ստորաբաժանումները սովորույթի ուժով են իրականացնում իրենց պարտականությունները, գնահատման հատուկ մեխանիզմներն ու գործիքները բացակայում են։ Դրա հետ մեկտեղ՝ քոլեջում որոշ ոլորտներում կան բարելավումներ՝ շենքային պայմաններում, ռեսուրսներով հագեցման, քոլեջ ընդունվողների աստիճանական որակի բարձրացման և այլն։

Ըստ ինքնավերլուծության՝ «Մշտադիտարկման արդյունքների հիման վրա բոլոր մասնագիտացումների գծով կրթական ծրագրերը վերանայվում են յուրաքանչյուր տարի և ներկայացվում են Քոլեջի մանկավարժական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը, իսկ ընթացիկ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացվում են արձանագրությունների տեսքով»։ Այցից պարզ դարձավ, որ խոսքը գնում է դասախոսների առարկայական/մոդուլային ծրագրերի մասին, այլ ոչ թե կրթական ծրագրերի։

ՄԿԾ-ների իրագործման վերաբերյալ կանոնավոր հավաքվում է հետևյալ տեղեկատվությունը՝ ուսանողների առաջադիմության՝ կիսամյակային և տարեկան ամփոփման արդյունքում, դասավանդման արդյունավետության՝ դասալսումների հիման վրա, ՄԿԾ-ների ռեսուրսներով ապահովվածության՝ դասախոսների և ուսանողների հետ հանդիպումների արդյունքում (ի տարբերություն առաջին երկուսի վերջինս որևէ կերպ փաստաթղթավորված չէ)։ Հավաքագրված տեղեկատվության վերլուծությունները բացակայում են, չկան հավաքագրված տեղեկատվության ստուգման մեխանիզմներ։

Դատողություններ: ԱԲՊՔ-ում մշակված են մի շարք կարգեր, որոնք հնարավորություն են տալիս որոշ չափով կանոնակարգել կառավարման գործընթացը և հաստիքների մեծ մասի գործառույթները։ Սակայն քոլեջը ամբողջապես չի ներդրել ռազմավարական կառավարման մոդելը։ Պլանավորումը չի կատարվում իրավիճակի հիմնովի վերլուծության վրա, ավելին իրավիճակի գնահատում իրականացնելու համար չեն հավաքագրվում անհրաժեշտ տվյալներ։ Պլան-ժամանակացույցի բացակայության

պայմաններում վտանգվում է ռազմավարության կատարողականը: ԱԲՊՔ ստորաբաժանումների աշխատանքի կարճաժամկետ պլանավորումը չի կապակցվում ռազմավարության հետ, ստորաբաժանումների տարեկան պլանները տարեց տարի կրկնվում են: Բացակայում են քոլեջի առաքելության ու նպատակների իրականացումը մշտադիտարկող և գնահատող հուսալի մեխանիզմները: Մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների բացակայությունը հնարավորություն չի տալիս ժամանակին դուրս բերել ռազմավարության իրականացման գործում թույլ տված բացթողումներն ու թերությունները և ռիսկային է դարձնում նպատակների իրագործումը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն փաստը, որ Ֆինանսական սղության հետևանքով քոլեջի ղեկավարությունը չի կարողանում ապահովել որոշ մասնագիտությունների իրականացման համար մարդկային և նյութական անհրաժեշտ ռեսուրսներ: Մտահոգիչ է նաև մարդկային ռեսուրսների փոքր քանակը քոլեջի կառավարման համակարգում, ինչի արդյունքում ԱԲՊՔ որոշ աշխատակիցներ գերծանրաբեռնված են, ինչը չի կարող չազդել նրանց աշխատանքի արդյունավետության վրա: Քոլեջի կազմակերպական կառուցվածքում և հաստիքացուցակում առկա են անհամապատասխանություններ:

Քոլեջի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցնել իրենց առնչվող որոշումների կայացմանը: Դասախոսները ակտիվ են կառավարման միջին օղակներում: Ուսանողները քոլեջի ղեկավարության հետ անմիջական շփման միջոցով կարողանում են հայտնել իրենց բավարարվածությունը կամ դժգոհությունն այս կամ այն գործընթացից: Դրա հետ մեկտեղ՝ հանդիպումները շահակիցների հետ ցույց տվեցին, որ նրանց իրազեկվածությունն ընթացող գործընթացներից, քոլեջի նպատակներից ցածր է, դասախոսների և ուսանողների մեծ մասը տեղյակ չեն քոլեջի ռազմավարական նպատակներից: Շահակիցների ցածր ներգրավվածությունը ռիսկային է դարձնում նպատակների իրագործումը:

Որոշումներ կայացնելիս Քոլեջի տնօրենը հաշվի է առնում քոլեջի վրա ազդող որոշ գործոններ, սակայն դրա համար չկան վերլուծությունն ապահովող տվյալների հուսալի բազաներ և կայուն մեխանիզմներ, հետևապես դատողությունները և որոշումները հաճախ սուբյեկտիվ բնույթ են կրում և սխալվելու ռիսկեր են պարունակում: Հավաքագրված տվյալների հավաստիությունը գնահատող մեխանիզմները բացակայում են, ՊԻԳԲ շրջափուլը կառավարման և վարչարարության ոլորտում դեռևս ամբողջապես ներդրված չէ, ավելին՝ կառավարաման անձնակազմի մեծ մասը դրա մասին պատկերացում չունի, ինչը կարող է հանգեցնել կառավարչական ոչ ճիշտ որոշումների կայացմանը:

Բացակայում են կառավարման համակարգի արդյունավետությունը գնահատող մեխանիզմներն ու վերլուծությունները, կառավարման տարբեր օղակների փոխհամագործակցությունը թույլ է, հաշվետվողականության մեխանիմներն առկա են, սակայն դրանք դեռևս ամբողջապես համակարգված չեն, ինչը հանգեցնում է ներքևից վերև, վերևից ներքև փոխանցվող տեղեկատվության կորստին և աշխատակիցների ցածր տեղեկացվածության, որը ռիսկեր է պարունակում ռազմավարական նպատակների արդյունավետ ապահովման գործընթացի և դրանց իրագործման տեսանկյունից:

Քոլեջում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվությանը անբավարար է, չկան եղած տեղեկատվությունը գնահատող մեխանիզմներ: Դրա հետևանքով քոլեջի ՄԿԾ-ներն իրագործվում են տարբեր արդյունավետությամբ: Քոլեջում որոշ ՄԿԾ-ների իրագործման լավ փորձը չի տարածվում մյուսների վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ռազմավարական նպատակների իրականացման համար ԱԲՊՔ-ի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները բավարար չեն, քոլեջը չունի ռազմավարության իրականացման պլան ժամանակացույց, կարճաժամկետ պլանավորումն իրավիճակային է և չի բխում ռազմավարությունից, քոլեջը չունի իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնաիրության կայուն մեխանիզմներ, ՊԻԳԲ շրջափուլը կառավարման և վարչարարության ոլորտում դեռևս ամբողջապես ներդրված չէ, ՄԿԾ-ների որակի մասին հավաքագրվող քանակական և որակական տեղեկատվությունը ամբողջական չէ, փորձագիտական խումբը գտնում է որ ԱՏՊՔ-ն չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: ԱԲՊՔ-ն իրականացնում է 10 միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Դիզայն», «Գեղանկարչություն», «Դերասանական արվեստ», «Հաշվապահական հաշվառում», «Բանկային գործ» «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Զբոսաշրջություն», «Քույրական գործ» և 1 նախնական՝ «Խոհարարական գործ»: Նշված կրթական ծրագրերն իրականացվում են առկա ուսուցմամբ՝ վճարովի և անվճար հիմունքներով: Կրթական ծրագրերի իրականացման համար հիմք են ծառայում պետական կրթական չափորոշիչները: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ բոլոր կրթական ծրագրերը համապատասխանում են ԱԲՊՔ առաքելությանը, համահունչ են տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կարիքներին:

Քոլեջը վերջին 3 տարիներին ընդունելություն չի իրականացրել հետևյալ մասնագիտությունների գծով՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Քույրական գործ», «Համակարգչային

գեղարվեստական նախագծում» և «Դերասանական արվեստ»։ 2022-2023 թողարկել է իր վերջին շրջանավարտները «Համակարգչային գեղարվեստական նախագծում» և «Դերասանական արվեստ» մասնագիտությունների գծով։ 2023-2024 ուստարում էլ վերջին շրջանավարտները կթողարկի «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Քույրական գործ» մասնագիտություններում։ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտությունները տարածաշրջանում ունեն մեծ պահանջարկ, սակայն առկա է մասնագետների հոսունություն, ինչն էլ խոչընդոտում է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպելուն։ Տարածաշրջանում պահանջված «Քույրական գործ» մասնագիտության որակյալ իրականացման համար Քոլեջը չունի համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ, այդ պատճառով ղեկավարությունը նպատակահարմար չի համարում շարունակել թողարկել բուժքույր/բուժեղբայր որակավորմամբ մասնագետներ։ Բուժքույրական կադրերի պակասի համալրումը մարզում հիմնականում տեղի է ունենում Երևանի բժշկական քոլեջների հաշվին։ «Դերասանական արվեստ» կրթական ծրագրում նույնպես եղել են ռեսուրսային խնդիրներ, սակայն քոլեջի ղեկավարությունը, կարևորելով այդ մասնագիտության դերը տարածաշրջանում, համագործակցելով Աբովյանի դրամատիկական թատրոնի հետ, նախատեսել է վերազինել դահլիճը, կաբինետները և 2024-2025 ուստարում կրկին ընդունելություն կազմակերպել։

2023-2024 ուստարում գործատուի («ԷՅ ԴԻ ԷՄ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ, որը տարածաշրջանում համարվում է սերտիֆիկացված աղամանդներ պատրաստող առաջատար ընկերություն) առաջարկությամբ ներդրվել է «Ոսկերչություն» նախնական մասնագիտական կրթական ծրագիրը։ Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ տարածաշրջանում համապատասխան որակավորում (մշակող՝ կիսաթանկարժեք և քարերի) ունեցող մասնագետների պահանջարկը մեծ է։ Համագործակցության շրջանակներում գործատուն նախատեսել է Քոլեջին տրամադրել համապատասխան ռեսուրսներ։ Քոլեջն ու գործատուն, կարևորելով ԱՀՈՒ (աշխատանքի վրա հիմնված ուսուցում) ձևաչափը, պլանավորում են «Ոսկերչություն» մասնագիտությունը համապատասխանեցնել դուալ կրթության ձևաչափին։ Այդ հարցով Քոլեջը բանակցությունների փուլում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ։

Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ վերջին տարիներին Քոլեջի ուսանողների 20-50%-ը շարունակում է կրթությունը բուհերում, իրենց մասնագիտությամբ աշխատող ուսանողների վերաբերյալ ամփոփ տվյալներ և վերլուծություններ չկային։

Մասնագիտական կրթական ծրագրերի հիմքում պետական կրթական չափորոշիչներն են։ Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասախոսները դասավանդվելիք մոդուլային ծրագրերը ներբեռնում են ՄԿՈՒԶԱԿ էջից և գրեթե առանց տեղայնացնելու կազմակերպում դասապրոցեսը։ Բացառություն են կազմում մշակութային ոլորտի մասնագիտությունները, որոնք բավականաչափ տեղայնացված են։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ կառավարման ոլորտում առկա են որոշ թերություններ ամբիոնի վարիչները թույլ վերահսկողություն ունեն

մոդուլային/առարկայական ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև պրակտիկաների ծրագրերի և կազմակերպման նկատմամբ: Ամբիոնների վարիչները չեն մասնակցում ՄԿԾ-ների ուսումնական պլանների մշակման և դասաբաշխման գործընթացին (դասաբաշխումն իրականացնում է ուսումնական մասը): Քոլեջը չի օգտագործում ՊԿՉ-ներով նախատեսված ընտրովի և նախասիրական դասընթացների հնարավորությունը՝ բյուջեի սահմանափակ լինելու պատճառով: Դրա հետ մեկտեղ «Գեղանկարչություն» մասնագիտության ուսանողները դասախոսի աջակցությամբ հաճախակի իրականացնում են արտալսարանային աշխատանք՝ խճանկարների ստեղծում, որը կարելի է դիտել որպես նախասիրական դասընթաց: Հետագայում նախատեսվում է նաև քանդակագործության աշխատանքներ իրականացնել:

Քոլեջը կարևորում է ուսանողների միջմասնագիտական փոխհամագործակցությունը: Այսպես՝ շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ «Զբոսաշրջություն» և «Խոհարարական գործ» մասնագիտությունների ուսանողները համագործակցության շրջանակներում այցելել են Սևանավանք, որտեղ զբոսաշրջության ուսանողներն են հանդես եկել որպես զբոսավարներ, իսկ «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողները այցելությունից հետո հոգացել են սննդի կազմակերպումը և պատրաստումը:

Դիտարկվող ՄԿԾ-ներում («Բանկային գործ», «Դիզայն», «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ») ուսումնական պլաններում նախատեսված են ուսումնական, արտադրական/մասնագիտական և նախաավարտական պրակտիկաներ:

«Բանկային գործ» ՄԿԾ -ի պրակտիկաները կազմակերպվում են «Ակբա բանկ» ԲԲԸ-ում և «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»-ում, ինչպես նաև կազմակերպվում է ճանաչողական այցեր ՀՀ Կենտրոնական բանկ: «Դիզայն» ՄԿԾ-ի պրակտիկաները անցկացվում են Կենդանաբանական այգում (նկարչական հմտությունները զարգացնելու նպատակով պլեներային պրակտիկան (բնության գրկում) անցկացվում է կենդանիներին նկարելու միջոցով), բուսաբանական այգում, թանգարաններում, Աբովյանի գեղարվեստի դպրոցում: «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ-ի պրակտիկաները կազմակերպվում են Աբովյանի համայնքապետարանում:

Փորձագիտական խմբին ներկայացվել է դիտարկվող 3 ՄԿԾ-ների միայն արտադրական/մասնագիտական պրակտիկաների ծրագրերը, որտեղ նշված չէին պրակտիկաների նպատակը, սահմանված ժամաքանակը, ինչպես նաև ներկայացված ծրագրերում սահմանված կետերը ենթադրում էին միայն ծանոթացում որևէ գործընթացի հետ (օրինակ՝ ծանոթացել եմ բոլոր տեսակի ավանդների ներգրավման գործառնությունների իրականացման փուլերին, ծանոթացել եմ վարկերի դասակարգման գործընթացին և այլն), գործնական բաղադրիչը թույլ է ներկայացված: Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանց և ծրագրի բովանդակությունը նույն է:

ՊԴ կազմը ազատ է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության հարցում: Շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ Քոլեջում մոդուլների մի մասի դասավանդման ընթացքում գերակշռում է թելադրությունների միջոցով ուսումնառության նյութերի տրամադրումը: Որոշ դասախոսների կողմից ուսանողներին տրվում էր նաև լրացուցիչ էլեկտրանային նյութեր, ձեռնարկներ: Դասալսումներից և

փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսումնառության պլաններ ոչ բոլոր դասախոսներն ունեն:

«Բանկային գործ» ՄԿԾ-ում դասավանդող դասախոսները կիրառում են հարց-պատասխան, զրույց-քննարկում և դասախոսություն մեթոդները: Մեթոդների մեծ մասը միտված են գիտելիքի ձևավորմանը, կարողություն ձևավորող առաջադրանքներ փորձագիտական խմբին չեն տրամադրվել: Այլ էր իրավիճակը «Դիզայն» մասնագիտության իրականացման դեպքում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների առաջընթացն ապահովվում է ստեղծված կրթական միջավայրի շնորհիվ: Դասավանդման և ուսումնառության մեթոդները բազմազան են, գերակշռում է անհատական մոտեցումը: Կարողությունների ձևավորմանը նպաստում են առաջադրանքներից դրական արդյունք են ապահովում հետևյալները՝ հորինվածքը (կոմպոզիցիան), երբ հանձնարարվում են թեմատիկ էսկիզներ, մակետավորում, գոբելեն, ինտերիեր, գծանկարը (վարպետության հասնելու դեպքում 5 րոպեում պետք է կատարել ճեպանկար): 10 ճեպանկարների հաջորդական կատարման դեպքում տեղի է ունենում տեխնիկայի կատարյալ յուրացում: Կազմակերպվում են նաև խմբային աշխատանքներ: Հանդիպումից պարզ դարձավ, որ դասավանդումը նպաստում է նաև անձնային աճին՝ ուսանողները սկսում են տիրապետել բեմական խոսքին, արժևորվում է ինքնուրույն մտածողությունը, ոչ թե սերտելը, սովորեցնում են սիրել սովորելը, հանձնարարությունները ոչ թե պասիվ ընդունվում են, այլ կազմակերպվում է քննարկում, ոգևորում են դառնալ ավելի լավը, քանի որ յուրաքանչյուր ուսանողի հանդեպ ուշադիր են և հատուկ մոտեցում են ցուցաբերում:

Դասախոսները առաջադրանքները չեն բաժանում ըստ ուսանողների առաջադիմության, քանի որ հաճախ ցածր կուրսերում ցածր առաջադիմություն ունեցող ուսանողները բարձր կուրսերում թռիչքաձև առաջընթաց են ունենում: Արվեստի պատմության մոդուլի շրջանակներում սովորողներին տրվում են գեղագիտական ճաշակի ձևավորմանը միտված առաջադրանքներ սովորողները ինքնուրույն մեկնաբանում են տարբեր ստեղծագործողների նկարները:

«Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» կրթական ծրագրի իրականացման դասավանդողները առաջադրանքները կազմում են հաշվի առնելով սովորողների նյութի տիրապետման մակարդակները. ուսանողներին տրվում են տարբեր գրքերի, ֆիլմերի, հեքիաթների վերլուծություններ, դերային խաղեր, գործնական փաստաթղթերի, տեղեկանքների, դիմումների, հրամանների կազմում, արխիվների դասակարգում, ռեֆերատներ, մասնագիտական բառապաշարներ: Դերային խաղերի մեթոդով ուսանողները կազմակերպում են ղեկավար-գործավար աշխատանքներ, կատարում են տարբեր ստեղծագործությունների զուգադրական թարգմանություններ՝ օտար լեզուներով, վերլուծում են ֆիլմեր՝ իրենց անհատական մոտեցմամբ: Սովորողները կազմում են խորհրդակցությունների կազմակերպման և նախապատրաստման աշխատանքներ, դերային խաղերով ներկայացնում են նաև՝ ինչպես պատասխանել հեռախոսազանգերին, կազմում տարբեր արձանագրություններ, նամակ-խնդրանքներ: Պրակտիկաների ընթացքում կատարվում է արխիվի դասակարգում, փաստաղթերի դասակարգում, կազմվում են մասնագիտական տեքստերի ոլորտային բառապաշարներ: Սովորողներն իրականացնում են

տարբեր երկրների նամակագրությունների թարգմանություններ, քաղաքական գործիչների ելույթներ, ստեղծագործություններ և թարգմանում են հեքիաթներ, ֆիլմեր:

Ուսանողների ընթացիկ գնահատումը հիմնականում իրականացվում է բանավոր հարցումներով: Գնահատման թերթիկներ գրեթե չեն տրամադրվում ուսանողներին: Մատյանների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ գնահատականները դրվում են յուրաքանչյուր արդյունքն ամփոփելիս: Մոդուլներն ամփոփվում են տարբերակված ստուգարքով կամ քննությամբ:

«Գեղանկարչություն» և «Դիզայն» մասնագիտություններում ուսանողի գնահատումը ունի նաև առանձնահատկություններ, գնահատումներում հաճախ կիրառվում է աշխատանքների հանձնաժողովով դիտումն ու գնահատումը: Դասախոսական կազմը ոչ միայն քննարկում է, այլև՝ այլ վարպետի մոտ փոխադրելու դեպքում, հաղորդում է ուսանողի թույլ և ուժեղ կողմերը:

Քոլեջում պետական ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է մասնագիտական մոդուլներից՝ բանավոր քննության ձևով, բացառությամբ «Գեղանկարչություն» և «Դիզայն» մասնագիտությունների, որոնց դեպքում ուսանողները ներկայացնում են դիպլոմային աշխատանքներ: Դիպլոմային աշխատանքների կազմակերպման, իրականացման և պաշտպանության ընթացակարգ Քոլեջը չի սահմանել:

Ավարտական ամփոփիչ ատեստավորման քննությունների դիտարկվող հարցաշարերի և հարցատոմսերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ըստ մասնագիտությունների մոտեցումները տարբեր են: «Բանկային գործ» և «Հաշվապահություն» մասնագիտություններում հարցաշարերը հիմնականում պարունակում են տեսական գիտելիքներ, ստուգող հարցեր: Գործնական կարողություններ, հմտություններ պարունակող առաջադրանքներ առկա չեն: Պատկերը այլ է «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ-ի ավարտական ամփոփիչ ատեստավորման հացաշարերում և հարցատոմսերում: Հարցաշարերը պարտադիր ներառում են գործնական առաջադրանքներ, թարգմանություններ: Նույնը վերաբերվում է նաև «Դիզայն» և «Գեղանկարչություն» մասնագիտություններին, որոնցում պարտադիր կա գործնական բաղադրիչ:

Պրակտիկաները գնահատվում են կազմակերպության կողմից տրված բնութագրի և պրակտիկայի օրագրի հիման վրա: Հստակ սահմանած գնահատման չափանիշներ Քոլեջը չունի:

Քոլեջն ունի «Գնահատականների բողոքարկման և վերահանձնման կարգ», որը գործում է 2019 թվականից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մինչ օրս բողոքարկման դեպքեր չեն գրանցվել: Եղել են վերահանձնման դեպքեր, երբ ուսանողը կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո դիմում է ներկայացրել գնահատականը վերահանձնելու նպատակով: Համաձայն կարգի՝ ուսանողն իրավունք ունի վերահանձնել 3 առարկա /մոդուլ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, բայց ոչ ավարտական կուրսի վերջին կիսամյակում:

Քոլեջում փորձում են պահպանել ակադեմիական ազնվությունը, գրագողության դեպքեր չեն հայտնաբերվել:

Քոլեջի կրթական ծրագրերը նույնական են ՀՀ այլ քոլեջների հետ այնքանով, որ բոլորը կազմված են ՀՀ պետական չափորոշիչների հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը արտերկրի կամ տեղական նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող քոլեջների հետ համեմատականներ չի իրականացրել:

ՄԿԾ-ների մշտադիտարկման համակարված և կանոնակարգված մեխանիզմներ ներդրված չեն: Այդ առումով տարբերվում են «Դիզայն» և «Գեղանկարչութուն» մասնագիտությունները: Սովորողների աշխատանքների գնահատումը իրականացվում է հանձնաժողովներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱԲՊՔ-ն իրականացվող ՄԿԾ-ները համահունչ են ՈԱՇ-ին, քոլեջի առաքելությանը և միտված են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքները բավարարելուն: Սակայն առկա են թերություններ ՄԿԾ կառավարման ոլորտում՝ ամբիոններում ՄԿԾ ամբողջական փաթեթները բացակայում են, մոդուլային/առարկայական և պրակտիկայի ծրագրերի մշակման և իրականացման նկատմամբ վերահսկողությունը թույլ է:

Փորձագիտական խմբի համար անհանգստացնող է, որ որոշ պահանջված մասնագիտությունների գծով Քոլեջը վերջին երեք տարիներին ընդունելություն չի իրականացրել հաշվի առնելով մասնագետների հոսունության խնդիրը, սակայն միևնույն ժամանակ դրական է գնահատում, որ Քոլեջը մտահոգ է ուսումնառության արդյունավետ կազմակերպման և որակյալ մասնագետներ թողարկելու հարցում:

Փորձագատիկան խումբը դրական է համարում, որ «Ոսկերչություն» ՄԿԾ-ի շրջանակներում Քոլեջը քայլեր է ձեռնարկում ներդնել ԱՀՈՒ ձևաչափ, ինչն էլ կնպաստի կրթությունից դեպի աշխատաշուկա շրջանավարտների սահուն անցման:

Քոլեջը չի օգտագործում ՊԿՉ-ով նախատեսված ընտրովի և նախասիրական դասընթացները: Մինչդեռ նախասիրական դասընթացների ցանկի առկայությունը հնարավորություն է տալիս ուսանողների կրթական հավելյալ կարիքների բավարարմանը: Այդ առումով լավ օրինակ է «Գեղանկարչություն» մասնագիտության շրջանակներում իրականացվող արտալսարանային աշխատանքների իրականացումը՝ խճանկարների ստեղծումը: Դրական է, որ Քոլեջն ընդհանուր առմամբ ունի ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդներ: ՄԿԾ կառավարման թերությունների հետևանքով ՄԿԾ-ների իրականացման արդյունավետությունը տարբեր է: Գովելի է «Դիզայն» և «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» ՄԿԾ դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունն ու կիրառումը, ինչի արդյունքում դասախոսները ապահովում են ուսանողակենտրոն և վերջնարդյունքահեն ուսուցում: ՄԿԾ-ների շրջանակներում հանձնարարվում են այնպիսի գործնական առաջադրաքներ, որոնք ուսանողների մոտ ձևավորում են ինքնուրույն և վերլուծական մտածողություն: Հանձնարարականները նպաստում են նաև սովորողների ինքնուրույնության և ստեղծագործական մտքի զարգացմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ թույլ է ներդրված «Բանկային գործ» մասնագիտության ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան ուսուցումը, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, առաջադրանքների տրամադրումը, ինչի արդյունքնում հիմնականում իրականացվում է դասախոսակենտրոն ուսուցում:

Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջում ներդրված չեն տարբերակված ստուգարքների, ընթացիկ քննությունների, պետական ավարտական ամփոփիչ ատեստավորումների, պրակտիկաների գնահատման չափանիշներ, և կարևորում է այդ չափանիշների ներդրումը, ինչի արդյունքում Քոլեջը կունենա պատճառաբանված, հստակ, ինչպես նաև թափանցիկ գնահատման համակարգ: Այդ համատեքստում տարբերվում է «Գեղանկարչություն» և «Դիզայն» մասնագիտություններում ուսանողի գնահատումը, որն ունի առանձնահատկություններ: Դրական է դիտվում, որ ընթացիկ գնահատումներում հաճախ կիրառվում է աշխատանքների հանձնաժողովով դիտումն ու գնահատումը: Դասախոսական կազմը ոչ միայն քննարկում է, այլև՝ այլ վարպետի մոտ փոխադրելու դեպքում, հաղորդում է ուսանողի թույլ և ուժեղ կողմերը, ինչը նպաստում է թույլ կողմերի հաջորդաբար վերացմանը: Այսինքն թեպետ մշտադիտարկման ինստիտուլացված մեխանիզմ չկա, սակայն կրթության ամբողջ ընթացքն ուսումնասիրվում է և թերությունների հայտնաբերման դեպքում բարելավվում: Վերոնշյալ ՄԿԾ-ների պետական ավարտական ամփոփիչ ատեստավորումները ամփոփվում են դիպլոմային աշխատանքով, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է մշակել դիպլոմային աշխատանքների կազմակերպման, իրականացման և պաշտպանության ընթացակարգ:

ՄԿԾ վերանայման և բարելավման համար կարևոր է նաև բենչմարքինգի գործիքակազմի ներդրումը, ինչը հնարավորություն կտա համանման կրթական ծրագրեր իրականացնող տեղական և արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ համագործակցության և փորձի փոխանակման շնորհիվ ընդլայնել ԱԲՊՔ հնարավորությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ-ի մասնագիտական կրթական ծրագրերը համահունչ են ՈԱՇ-ին, համապատասխանում են ԱԲՊՔ առաքելությանը, կազմված են համաձայն պետական կրթական չափորոշիչների, միտված են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքները բավարարելուն, ընդհանուր առմամբ ունեն ՄԿԾ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդներ, քայլեր են ձեռնարկվում ԱՀՈՒ ձևաչափի ներդրման, առկա են ՄԿԾ-ի բարելավման օրինակներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՊՔ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Քոլեջում ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդներով: Հավաքագրման գործընթացում կարևոր դեր են կատարում քոլեջի ուսանողներն ու շրջանավարտները, ովքեր ներկայացնում են իրենց կարծիքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից նաև իրականացվել են այցեր տարածաշրջանի կրթական հաստատություններ, որոնց ընթացքում ներկայացվել է քոլեջի գործունեությունը, բաժանվել են թռուցիկներ:

Ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում է քոլեջի սոցիալական հարթակներով: Քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ ԿԳՍՄ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգի համաձայն: Ընդունելությունն իրականացվում է մրցութային կարգով և առանց ընդունելության քննությունների՝ բացառությամբ «Դիզայն» և «Գեղանկարչություն» ՄԿԾ-ների: Վերոնշյալ ՄԿԾ-ների շրջանակներում դիմորդը քննություն է հանձնում «Կոմպոզիցիա», «Գունանկար» և «Գծանկար» առարկաներից:

Վերջին ուսումնական տարվա ընթացքում քոլեջում նկատվել է դիմորդների թվի աճ այն գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշները 26,3%-ով: Մինչ այդ մի քանի տարի դիմորդների քանակը հիմնականում եղել է անփոփոխ:

Ըստ ինքնավերլուծության՝ վերջին տարիների ընթացքում քոլեջից դուրս մնացած ուսանողների թիվը կազմում է 7,8-10,2%, իսկ վերականգնված ուսանողների թիվը՝ 1-4,9%: Քոլեջից դուրս մնացած ուսանողների թիվը պայմանավորված է տարբեր պատճառներով՝ ուսանողի կողմից սեփական դիմումի համաձայն՝ կախված որոշակի իրադարձություններից, ինչպես նաև ցածր առաջադիմության, հաճախակի բացակայությունների պատճառով: Նման դեպքերը կանխելու նպատակով կուրսղեկները և դասախոսները մշտական կապ են պահպանում ծնողների հետ:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման մշակված քաղաքականություն առկա չէ: Ուսանողների կրթական կարիքների վերհանման գլխավոր նախադրյալն է հանդիսանում դասախոսների հետ կապը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները որոշ դեպքերում դասերից հետո հարցեր են ուղղում դասախոսին՝ կապված դասի բովանդակության հետ: Նմանատիպ ընթացակարգ է համարվում նաև փոխտնօրենների հետ հանդիպումները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տվյալ հանդիպումների ժամանակ քննարկվում են ընդհանուր կրթական հարցեր:

Քոլեջում կազմակերպվում են խորհրդատվություններ քննություններից և ամփոփիչ ատեստավորումից առաջ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդատվությունների ժամանակացույց առկա չէ, այնուամենայնիվ խորհրդատվությունների մասին ուսանողները տեղեկանում են դասախոսների կամ կուրսղեկների միջոցով, հաճախ համաձայնեցնում են դասախոսի հետ կայանալիք խորհրդատվության ամսաթիվը: Խորհրդատվությունների ընթացքում ուսանողները չունեն հասանելիություն քննական հարցաշարին, բայց հարցաշարերը կազմվում են ըստ անցած թեմաների և խորհրդատվությունների ժամանակ այդ թեմաները ուսանողները կրկնում են: Որոշ բաժիններում, դիպլոմային աշխատանքներ կատարելու ընթացքում, ուսանողները մշտապես կապի մեջ են գտնվում դասախոսների հետ: Լրացուցիչ պարապմունքներ պլանավորված չեն, դրանք տեղի են ունենում ուսանողի ցանկությամբ՝ որոշակի թեմա չհասկանալու դեպքում:

Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողները տեղեկացված են վարչական ծառայություններից օգտվելու հնարավորության մասին, սակայն մեծ մասը չի օգտվում այդ ծառայություններից: Ուսանողներին հուզող հարցերին կամ առաջարկներին տրվում է բանավոր կամ գրավոր պատասխան: Առկա չէ վարչական աշխատակազմին դիմելու սահմանված ընթացակարգ և ժամանակացույց, սակայն ուսանողը ցանկացած պահի կարող է դիմել վարչական մասին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում կուրսղեկին են դիմում որոշակի առաջարկների, հարցերի կամ խնդիրների առկայության դեպքում: Հետագայում կուրսղեկի կողմից վերոնշյալ հարցերը կամ առաջարկները բարձրաձայնվում են, իրականացվում է քննարկում համապատասխան ստորաբաժանման և ՈւԽ-ի միջոցով: Ուսանողների առաջադրած հարցերը բանավոր ձևաչափով քննարկվում են ՈւԽ-ի անդամների կողմից, այնուհետև բարձրաձայնվում համապատասխան նիստերի ժամանակ: Օրինակ՝ ՈւԽ-ի միջնորդությամբ բարձրաձայնվել է ուսանողի վճարողունակ չլինելու խնդիրը, որը լուծվել է Կառավարման խորհրդի որոշմամբ:

Քոլեջում կա կարիերայի պատասխանատու: Համաձայն ինքնավերլուծության՝ ուսանողների 90%-ը տեղյակ է կարիերային նպաստող ծառայություններից: Մինչդեռ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները չունեին տեղեկություն կարիերայի կենտրոնի մասին: Դա պայմանավորված է այն փաստով, որ կարիերայի կենտրոնի և պրակտիկայի բաժնի աշխատակիցը միևնույն անձն է: Պրակտիկայի ընթացքում ուսանողները շփվում են գործատուների հետ, որոնցից ոմանք նաև դասավանդում են քոլեջում:

Համաձայն քոլեջի մի քանի տարիների ներկայացրած տվյալների՝ ուսանողների 8,1-10,8% ուսումը շարունակում է բուհերում: Քոլեջն ունի պայմանագրեր որոշ բուհերի հետ, որոնց շնորհիվ ուսանողները հնարավորություն են ստանում շարունակել իրենց ուսումը նախընտրած բուհի 2-րդ կուրսում:

Քոլեջի «Դիզայն» և «Գեղանկարչություն» բաժիններում ուսանողներին հանձնարարվում են հետազոտական առաջադրանքներ: «Գեղանկարչություն» բաժնում ուսանողները կատարում են դիպլոմային աշխատանք՝ որպես ամփոփիչ ատեստավորում:

Բացի դրանից, ուսանողները ստանում են առաջադրանքներ, որոնք կստացվեն միայն որոշակի ուսումնասիրություններ կատարելուց հետո:

Համաձայն ինքնավերլուծության՝ քոլեջում ուսանողների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են քոլեջի ներքին կարգապահական կանոններում, քոլեջի և ուսանողների միջև ստորագրվող պայմանագրերում: Քոլեջում ուսանողների իրավունքների ներկայացումն ու պաշտպանությունը ապահովում է հիմնականում Ուսանողական խորհուրդը, որը ինքնակառավարվող մարմին է, գործում է իր կանոնադրության համաձայն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ն ունի նոր ձևավորված կազմ, հիմնականում զբաղվում է տարաբնույթ կազմակերպչական և ուսուցողական հարցերով և դեռևս չի հանդիպել ուսանողների իրավունքների պաշտպանության անհրաժեշտության դեպքերի: Ուսանողների մոտ ծագած խնդիրները լուծվում են կուրսղեկների միջնորդությամբ կամ դասախոսի հետ զրույցի շնորհիվ:

Քոլեջում առկա չէ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման սահմանված կարգ, սակայն իրականացվում են փոխտնօրենների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում ուսանողներն արտահայտում են իրենց կարծիքները տարատեսակ հարցերի շուրջ: Դրանք տեղի են ունենում բանավոր ձևաչափով և չեն արձանագրվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ԱՊԲՔ-ում՝ ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ ընթացակարգերի առկայությունը, որոնք նպաստել են վերջին տարվա ընթացքում դիմորդների քանակի աճին, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ որոշակի մեխանիզմների օգտագործումը քոլեջի կողմից (օրինակ՝ վեբ կայքի ստեղծումը) կնպաստի վերոնշյալ գործընթացների զարգացմանը:

Մտահոգիչ է ուսանողների կրթական կարիքների վերհանման համար նախատեսված հստակ քաղաքականության բացակայությունը, սակայն փորձագիտական խումբը դրական է համարում որոշակի ոչ ֆորմալ ընթացակարգերի առկայությունը, որոնք միասին նպաստում են ուսանողների կրթական կարիքների վերհանմանը: Այդպիսիք են դասախոսների, կուրսղեկների և փոխտնօրենների հետ կազմակերպվող հանդիպումները, որոնց ընթացքում ուսանողներն արտահայտում են իրենց հուզող հարցերը: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ նմանատիպ հանդիպումներում քննարկվող հարցերի ու առաջարկների արձանագրումը կնպաստի հետագա քայլերի ճշգրիտ պլանավորմանը: Դրական է քննական շրջանում խորհրդատվությունների առկայությունը, որոնք նպաստում են ուսանողների արդյունքների բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողների՝ վարչական աշխատակազմին դիմելու լայն հնարավորությունները, սակայն մտահոգիչ է սահմանված մեխանիզմի բացակայությունը, որի միջոցով ուսանողների համար ավելի պարզ կլիներ վերոնշյալ գործընթացը:

Փորձագիտական խմբի համար անհանգստացնող է, որ ուսանողները տեղեկացված չեն Կարիերայի կենտրոնի և դրա գործունեության մասին, սակայն դրական է դիտարկվում

ԱՊԲՔ-ի կապը գործատուների հետ: Առկա են քոլեջի հետ համագործակցող գործատուներ, ովքեր դասավանդում են քոլեջում և ուսանողների համար լայն հնարավորություններ են բացում՝ ավարտելուց հետո:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի որոշակի բաժիններում ուսանողների կողմից իրականացվում են հետազոտական աշխատանքներ, ուսումնասիրություններ, այնուամենայնիվ քոլեջում բացակայում է ընդհանուր հետազոտական հմտություններ ձևավորող քաղաքականություն, որը կնպաստի ուսանողների ներգրավվածությանը վերլուծական աշխատանքներում:

Գովելի է այն փաստը, որ քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ, որը նպաստում է ուսանողակենտրոն միջավայրի ստեղծմանը: Ուսանողական խորհուրդը զբաղվում է հիմնականում կազմակերպչական հարցերով, դեռևս չի առնչվել ուսանողների իրավունքների պաշտպանության դեպքի հետ: Ուսանողները, խնդիրների առկայության դեպքում, առանձնազրույց են ունենում դասախոսների կամ կուրսղեկների հետ, ինչի արդյունքում հաճախ գալիս են ընդհանուր հայտարարի: Իրականում կիրառվող այդպիսի մեխանիզմները այնքան էլ հուսալի չեն և կարող են ռիսկեր պարունակել, քանի որ չեն բացառվում ճնշման տակ համաձայնության գալու դեպքերը:

Մտահոգիչ է այն փաստը, որ ՄՈՒՀ-ում չեն գործում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ, որոնք կընձեռեին հնարավորություն զարգացնելու վերոնշյալ մեխանիզմները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ուսանողների ընդունելության կանոնակարգված գործընթաց, վերջին տարվա ընթացքում գրանցվել է դիմորդների թվի աճ, ուսանողների կարիքների վերհանման նպատակով կազմակերպվում և իրականացվում են տարատեսակ հանդիպումներ, որոշակի մասնագիտություններում ուսանողները կատարում են հետազոտական աշխատանքներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԲՔ-ն բավարարում է 4-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊԲՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Աբովյանի բազմագործառույթային պետական քոլեջն իր դասախոսական կազմի համալրումն իրականացնում է մրցութային կարգով: Նախապես թափուր տեղերի վերաբերյալ տրվում են հայտարարություններ Զբաղվածության կենտրոնում, ՄՈՒՀ-ի

ֆեյսբուքյան էջում: Համապատասխան ամբիոնները մրցույթի համար կազմվում են հարցաշարեր, ձևավորվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են համապատասխան մասնագետներ և անդամներ Կառավարման խորհրդից: Քննություններն անցկացվում են բանավոր կարգով. մասնակիցներին տրվում են մասնագիտական ոլորտի և մեթոդական հարցեր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թեև հաստատությունը յուրաքանչյուր կրթական ծրագրի համար դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող առանձին սահմանված հստակ պահանջներ չունի, այդուհանդերձ, քոլեջի կառավարիչները դասախոսական կազմը համալրելիս կարևորում են և՛ մասնագիտական բարձր գիտելիքները, և՛ մանկավարժական հմտությունները, մասնագիտական փորձը՝ ձգտելով ներգրավել ոլորտի փորձառու և բանիմաց մասնագետների:

Քոլեջի աշխատողների աշխատանքի ընդունման և ազատման կարգը սահմանվում է «Ներքին կարգապահական կանոններում», ինչպես նաև «Մանկավարժական աշխատողների իրավունքներ և պարտականություններ» փաստաթղթում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական սուղ միջոցների պատճառով քոլեջում հաճախ լինում է մասնագետների արտահոսք և խնդիրներ են ծագում անհրաժեշտ մասնագետներ ներգրավելիս: Համապատասխան որակավորումներ ունեցող մասնագետների բացակայության պատճառով քոլեջը ստիպված է հրաժարվել որոշ կրթական ծրագրերից («Քույրական գործ», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում») և ընդունելություն չի իրականացնում:

Ներկայումս քոլեջի դասախոսական կազմը 61-ն է, որոնցից 46-ը հիմնական աշխատողներն են, 15-ը՝ համատեղությամբ: Բոլոր դասախոսներն ունեն համապատասխան մասնագիտական որակավորում: Ներգրավված են նաև գործատու դասավանդողներ: Այցից պարզ դարձավ, որ չնայած որոշ մասնագիտությունների գծով կա կադրերի պակաս, սակայն քոլեջը կարողանում է ապահովել կրթական ծրագրերի իրականացումը գործատուների հետ համագործակցության շնորհիվ:

Դասախոսների գնահատման հիմնական մեխանիզմը դասալսումներն են, ուսանողների հետ բանավոր զրույցները, որոնք տարվում են փոխտնօրենների և կուրսղեկների կողմից՝ ուսանողների ընդհանուր բավարարվածությունը դասախոսներից գնահատելու համար: Ուսանողների կողմից դասախոսների գնահատման գրավոր արձանագրություններ կամ վերլուծությունների առկա չեն, թեև ուսանողների հետ հանդիպումները, ըստ շահակիցների, հնարավորություն են տալիս դուրս բերել ուսումնական գործընթացին առնչվող խնդիրներ, որոնց տրվում են համարժեք լուծումներ: Ուսանողների կողմից բարձրացված հարցերը հիմնականում վերաբերում են դասավանդման մեթոդներին: Դասալսումներն իրականացնում են բաժնի վարիչները, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, լինում են նաև փոխադարձ դասալսումներ՝ փորձի փոխանակման և մասնագիական զարգացման նպատակով: Դասալսումները հնարավորություն են տալիս դուրս բերել դասավանդմանը և ուսումնառությանը առնչվող հարցեր, ինչպես օրինակ՝ մեթոդական, դասի առավել արդունավետ կազմակերպման: Քննարկումների արդյունքում դասախոսներին տրվում են համապատասխան ցուցումներ և

մեթոդական աջակցություն: Դասախոսներին մեթոդական աջակցություն տալու նպատակով վերապատրաստումներ են կազմակերպվում նաև հաստատության ներսում՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թեև քոլեջի 2021-2026 թվակնների Ռազմավարական ծրագրում որպես նպատակ առանձնացված է քոլեջի դասախոսական կազմի պատրաստման և վերապատրաստման արդյունավետության բարձրացումը, որի իրականացման համար նախատեսված է մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, այդուհանդերձ իրականացվող վերապատրաստումները միայն մեթոդական են, դասախոսները մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի ամենամյա վերապատրաստումներին, իսկ մասնագիտական վերապատրաստումների հնարավորություն դասախոսները որպես կանոն չունեն: Քոլեջում դասախոսների մասնագիտական առաջընթացի ապահովման այլ ընթացակարգեր առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում առկա է դասավանդողների ներգրավման խնդիր, ինչն, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է հաստատության սուղ ֆինանսական միջոցներով: Այդուհանդերձ, քոլեջը հնարավորինս ձգտում է ապահովել դասախոսական կազմի կայունությունը՝ ստեղծելով դասախոսների համար անհրաժեշտ բարենպաստ միջավայր: Օրինակ՝ դասախոսները ստանում են պարգևավճարներ, ինչպես նաև ձեռք են բերվում ուսումնառության համար անհրաժեշտ ռեսուրսներ: Առկա է խրախուսման կարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խրախուսումները հիմնականում գրավոր շնորհակալագրերի տեսքով են, դրամական խրախուսում վերջին տարիներին հատկացվել է միայն մեկ անգամ և տրվել է ողջ աշխատակազմին: Դասախոսական կազմը բոլոր անհրաժեշտ հարցերով դիմում է փոխնտօրենին, տնօրենին, ընթացիկ հարցերը քննարկվում են Մանկխորհին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը բարձր պատասխանատվությամբ է իրականացնում իր գործառույթները: Ուսանողների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի մեծ մասի անձնվեր աշխատանքի շնորհիվ, քոլեջում ստեղծվում է կրթություն ստանալու բարենպաստ միջավայր և մոտիվացիա:

Քոլեջի ուսումնաօժանդակ և վարչական կազմը ներկայացված է հաստատության հաստիքացուցակում:Ներկայումս վարչական և ուսումնաօժանդակ կազմը 29 է: Քոլեջում առկա են ուսումնական բաժնի վարիչի, հանրակրթական առարկաների բաժնի վարիչի, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի, վարչատնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պաշտոնեական հրահանգները, որտեղ նկարագրված են նրանց հիմնական գործառույթներն ու պատասխանատվության ոլորտը, վարչական կազմի մյուս հաստիքների համար պաշտոնի անձնագրեր դեռևս ստեղծված չեն: Որոշ ստորաբաժանումների կարգերում, օրինակ՝ արխիվի, գրադարանի, կարիերայի կենտրոնի, Որակի կենտրոնի, հաշվապահական կանոնակարգի կա աշխատողների գործառույթների նկարագիրը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսական սահմանափակ ռեսուրսներով պայմանավորված վարչական անձնակազմի առանձին

աշխատողներ գերծանրաբեռնված են: Օրինակ՝ տնօրենի տեղակալը իրականացնում է նաև արխիվավարի, կադրերի տեսուչի, ամբիոնի վարիչի գործառույթներ, վարում է քոլեջի ֆեյսբուքյան էջը, նաև դասավանդում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից իրականացվող ջանքերը՝ ներգրավելու ոլորտի բարձր որակավորում ունեցող մասնագետների, որոնք նպաստում են կրթական ծրագրերի վերջնարդյունքների արդյունավետ ապահովմանը: Դրական է գնահատվում դասավանդման գործընթացում գործատուների և պրակտիկ ոլորտի ներկայացուցիչների ներգրավումը, սակայն մտահոգիչ է ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված դասախոսների արտահոսքը և կայունության հետ կապված խնդիրները: Սա որոշակի ռիսկեր է պարունակում կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար: Փորձագիտական խումբը խրախուսում է դասախոսական կազմի կայունության ապահովվանը ուղղված ջանքերը, քանի որ դա հնարավորություն է տալիս ձևավորել իրականացվող կրթական ծրագրերի վերջանարդյունքները:

Գովելի է հաստատության կողմից դասախոսական և վարչական կազմի համար անհրաժեշտ բարենպաստ միջավայրի ապահովմանն ուղղված քայլերը, դասախոսների խրախուսման առկայությունը, այդուհանդերձ փորձագիտական խմբի դիտարկմամբ դասախոսների կարիքների վերհանման և ներքին գնահատման մեխանիզմները բազմազանեցման կարիք ունեն: Դա հնարավորություն կստեղծի լիարժեքորեն գնահատելու դասախոսների կարիքները, ձեռնարկելու կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ մտահոգիչ է վարչական կազմի ծանրաբեռնվածության բարձր մակարդակը, ինչը կարող է խոչընդոտել աշխատանքերի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը: Վարչական կազմի գործառույթների հստակ սահմանումը և բաշխումը կնպաստի վարչական օղակների աշխատանքների արդյունավետության բարձրացմանը՝ նպաստելով ռազմավարական նպատակների ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ-ի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական կազմով, որոնց որակավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին և առկա է քոլեջի ռազմավարական նպատակների իրագործմանը միտված ուսումնաօժանդակ կազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՊՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Համաձայն ինքնավերլուծության՝ Աբովյանի բազմագործառույթային պետական քոլեջն իր ռազմավարական նպատակների և առաքելության շրջանակներում ակտիվացնում է հետազոտական գործունեությունը՝ մշակելով այնպիսի քաղաքականություն, որով հնարավոր կլինի գնահատել կատարվող հետազոտությունների արդյունավետությունն՝ ըստ արդիականության և կիրառելիության, խրախուսել ուսանողների պրակտիկաների կիրառական-հետազոտական ուղղվածությունը, ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի էական աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ իրականում հաստատությունը հետազոտական ոլորտում իր հավակնություններն ու հետաքրքրություններն արտահայտող ռազմավարություն, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, քաղաքականություն և ընթացակարգեր չունիմ:

Քոլեջում չի սահմանել ինչ է հետազոտությունն իր համար, չեն իրականացվում հաստատության զարգացմանը նպաստող հետազոտություններ՝ չեն վերհանվում շուկայի կարիքները, չեն ուսումնասիրվում քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնները, մինչդեռ, դրանք կարող էին նպաստել հետազոտական մտքի զարգացմանը քոլեջում:

Այցից պարզ դարձավ նաև, որ հետազոտությունը քոլեջի ղեկավար և դասախոսական կազմի մեծ մասի կողմից դեռևս չի ընկալվում որպես դասավանդման և ուսումնառության գործընթացի բաղադրիչ մաս: Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման առանձին տարրեր առկա են միայն որոշ մասնագիտություններում: Օրինակ՝ «Դիզայն» և «Գեղանկարչություն» կրթական ծրագրերում սովորողներին տրվում են ինքնուրույն, անհատական, ստեղծագործական աշխատանքներ՝ կուրսային աշխատանքներ, ռեֆերատներ, նախագծային աշխատանքներ, պաստառներ, մակետներ, և այլն, որոնցում հետազոտական, վերլուծական բաղադրիչն առկա է: «Դիզայն» մասնագիտության սովորողներին հանձնարարվում է ուսումնասիրել տարբեր նկարիչների ստեղծագործությունների առանձնահատկությունները և կատարել համեմատական վերլուծություն: Նմանատիպ հանձնարարությունների նպատակը լավագույն փորձերի, նորամուծությունների ուսումնասիրությունն է, ինչպես նաև արվեստի ոլորտում սովորողին յուրահատուկ ձեռագրի գտնելուն աջակցումը: Վերլուծական բաղադրիչի որոշ տարրեր սովորողներին տրվող հանձնարարականներում տեսանելի են նաև «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտական կրթական ծրագրի ուսուցման մեջ: Օրինակ՝ սովորողներին հանձնարարվում են տարբեր ստեղծագործությունների, ֆիլմերի, հեքիաթների վերլուծություններ՝ շեշտադարելով ուսանողի ինքնուրույն եզրահանգման կարևորությունը, մասնագիտական բառապաշարի զարգացումը: Ուսանողները նաև

ինքնուրույն կազմում են մասնագիտական բառապաշարներ, զուգադրական թարգմանություններ են կատարում տարբեր լեզուներով: Այդուհանդերձ, մասնավոր օրինակների առկայությանը զուգահեռ, հաստատությունում հետազոտական աշխատանքների և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ ինստիտուցիոնալ մակարդակով առկա չեն, հետազոտությունների իրականացման, դրանցում դասախոսների և ուսանողների ընդգրկման և խրախուսման մեխանիզմները բացակայում են, ինչպես նաև առկա չեն նորարարությունների, տեղական և միջազգային փորձի ուսումնասիրման մեխանիզմներ: Քոլեջում բացակայում են դասավանդման լավ փորձի վերաբերյալ հետազոտությունները: Փորձագիտական այցի ժամանակ դասախոսների հետ հանդիպումից պարզ դարձավ, որ հաճախ մասնագիտական գրականության բացակայության պատճառով, դասախոսները իրենց մասնագիտական գիտելիքները կատարելագործում և ոլորտի նորարարություններին տեղեկանում են ուսումնասիրելով այլ հաստատությունների փորձը և հավաքագրելով դասավանդման համար անհրաժեշտ նյութերը:

Դատողություններ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ քոլեջը դեռևս չի հստակեցրել՝ թե հետազոտությունը ինչ է իր համար: Այս հարցի վերաբերյալ շահակիցների պատկերացումները շատ տարբեր են, ընդհանրական մոտեցում չի ձևավորվել: Դրանով է բացատրվում քոլեջում հետազոտությունների ոլորտում հստակ սահմանված ուղղությունների, հավակնությունների և հետաքրքրությունների և քաղաքականության բացակայությունը: Փորձագիտական խումբը կարևորում է հետազոտությունների ոլորտում հստակ ռազմավարության սահմանումը, քանի որ ԱԲՊՔ առաքելության և տեսլականի շրջանակներում է դառնալ գիտության, արվեստի, մշակույթի, սպասարկման և արհեստագործական ոլորտների տարածման, կրթական զարգացման կայուն և բարձր մասնագիտացում ձևավորող կրթական օջախ, պահապանել կրթական բարձր չափանիշներ և տալ հնարավորություն սովորողներին լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող կրթություն: Առանց միջին մասնագիտական կրթության մակարդակի համապատասխան հետազոտական բաղադրիչի քոլեջի համար այդ նպատակների իրագործումը ռիսկային է:

Փորձագիտական խմբի դիտարկմամբ, հետազոտական գործունեության իրականացումը և վերլուծական բաղադրիչի կիրառումը կխթաներ սովորողների մասնագիտական հմտությունների, կարողությունների զարգացումը, ինչը պահանջվում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներով: Դասախոսներին և սովորողներին հետազոտական գործունեության մեջ ընդգրկելու մեխանիզմների մշակումը և ներդնումը հիմքեր կստեղծի մասնագիտական առաջընթացի, նորարարությունների ուսումնասիրման համար՝ նպաստելով աշխատաշուկայի պահանջներին համահունչ հմտություններով և կարողություններով մասնագետների պատրաստմանը:

Փորձագիտական խումը կարևորում է որոշ մասնագիտությունների գծով սովորողների ինքնուրույն վերլուծական, ստեղծագործական աշխատանքների իրականացումը՝ սովորողների վերլուծական, քննադական, ստեղծագործական մտքի

զարգացման տեսանկյունից, սակայն այդ լավ փորձի գիտակցումը քոլեջում դեռևս չկա և այդ պատճառով այն չի տարածվում մյուս մասնագիտությունների կրթական ծրագրերի վրա: Մինչդեռ բոլոր մասնագիտությունների գծով նմանօրինակ առաջադրաքների և հանձնարարականների ներդնումը կխթանի հետազոտությունն ու զարգացումն ինստիտուցիոնալ մակարդակում: Ոլորտների միջազգային և տեղական լավագույն փորձի ուսումնասիրման և կիրառման մեխանիզմների ներդնումը, փորձագիտական խմբի դիտարկմամբ, կնաստի հետազոտության ոլորտում ԱԲՊՔ-ի քաղաքականության և ռազմավարության սահմանմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ-ը չունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, քոլեջում դեռևս չկա հետազոտական գործունեության իրականացման անհրաժեշտության գիտակցում, չեն ստեղծվում ուսումնառության հետ կապի ինստիտուցիոնալ մեխանիզմներ, քոլեջում առկա լավ փորձը չի հետազոտվում և չի տարածվում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱԲՊՔ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: ԱԲՊՔ-ի 2021-2026թթ. ՌԾ-ում ամրագրված 5-րդ նպատակը նյութատեխնիկական բազայի համալրումն է և լսարանների արդիականացումը: Քոլեջի շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 8567 մ/քառ., բաղկացած է 2 առանձին երեքհարկանի և մեկհարկանի կառույցներից: Հողամասի տարածքը զբաղեցնում էր 4.8 հա: Քոլեջն ունի 37 լսարանային ֆոնդ՝ ներառյալ 3 համակարգչային լսարան, ՆԶՊ կաբինետ, 9 նկարչական արհեստանոց, 1 նկարչական լաբորատորիա: Առկա է նաև 2 գրադարան, 1 մարզադահլիճ, 2 դահլիճ, 3 մարզահրապարակ, ուսումնական զենքի պահոց և բուժկետ: Վարչական աշխատակիցները ապահովված են աշխատասենյակներով: Քոլեջն ունի 57 համակարգիչ: ՆԶՊ կաբինետը հագեցած է համապատասխան ցուցապաստառներով: Նկարչական արհեստանոցներում առկա են մոլբերտներ, իսկ նկարչական լաբորատորիայում՝ գիպսե արձանիկներ, նատյուրմորտներ, օրնամենտներ/նախշազարդեր:

Քոլեջը չունի բուֆետ, ինչի անհրաժեշտության մասին բազմիցս նշեցին շահակիցները:

«Խոհարարական գործ» մասնագիտության համար առկա էր խոհանոց, որը ապահովված էր կրթական ծրագիրը իրականացնելու համար առաջնային անհրաժեշտ ռեսուրսներով:

«Ոսկերչություն» մասնագիտության համար առանձնացված էր արհեստանոց, որը փորձագիտական այցի ժամանակ գտնվում էր վերանորոգման փուլում: «ԷՅ ԴԻ ԷՄ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ- ի հետ համագործակցության արդյունքում մինչև 2023 թվականի տարեվերջ պլանավորվել է ավարտին հասցնել արհեստանոցը և կահավորել համապատասխան ռեսուրսներով (4 կիսաթանկարժեք քարերի մշակման հաստոց, 4 ոսկերչական սեղան, 3 սմարթ գրատախտակ):

«Քույրական գործ» ՄԿԾ-ում Քոլեջը ապահովված չէ համապատասխան ռեսուրսներով: Հարկ է նշել, որ Քոլեջը, գիտակցելով խնդիրը, այլևս այդ մասնագիտության գծով ընդունելություն չի իրականացնելու:

Մյուս մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար բավարար ռեսուրս տրամադրվում է, որի մի մասը բարելավման և նորացման կարիք ունի:

Սմարթ գրադարանը, որը գտնվում էր գլխավոր մասնաշենքում, ստեղծվել է 2021թ-ին «Սմարթ» հիմնադրամի նախաձեռնությամբ: Գրադարանում առկա էր ընթերցասրահ, պրոեկտոր: Այնտեղ անցկացվում են բաց դասեր, միջոցառումներ, սեմինարներ, հանդիպում-քննարկումներ շահակիցների հետ: Գրադարանն ունի ժամանակակից ինտերիեր, ինչպես նաև հագեցած է հայկական և արտասահմանյան դասական և ժամանակակից գրականությամբ: Մյուս գրադարանը գտնվում էր այլ մասնաշենքում, որտեղ հիմնականում առկա էր հանրակրթական բլոկի դասագրքեր և որոշ մասնագիտական գրքեր, որոնք հին հրատարակության էին: Հանրակրթական բլոկի գրականությունից ուսանողները կարող են օգտվել նաև առցանց տարբերակով, պատերին փակցված էին համապատասխան QR կոդեր համակարգ մուտք գործելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջն ունի մասնագիտական գրքերի կարիք: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ Քոլեջն չունի ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներ, փորձեր իրականացնելու համար ռեսուրսները քիչ էին:

Քոլեջի դահլիճներից մեկը չի շահագործվում, քանի որ դեռևս անբարվոք վիճակում է, իսկ մյուսը հիմնականում ծառայում է «Դերասանական արվեստ» մասնագիտության ուսանողների համար: Քոլեջը նախատեսել է վերանորոգել դահլիճները և զինել համապատասխան ռեսուրսներով: Քոլեջի մասնաշենքերը ապահովված չեն Wi-Fi կապով:

10.09.2020թ.-ի 1519-Ն որոշման համաձայն դրամաշնորհային պայմանագրի հիման վրա ՀՀ ԿԳՄՍ նախարարության բյուջեից Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջին է հատկացվել 29,000.0 հազ.դրամ գումար՝ քոլեջի մասնաշենքի վերանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքների ձեռքբերման համար:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ Քոլեջը վերջին 3 տարիներին բավականին մեծածավալ վերանորոգման աշխատանքներ է իրականացրել: Հիմանանորոգվել է մեկհարկանի մասնաշենքը: Մինչ օրս շարունակական բնույթ է կրում Քոլեջի բարեկարգման աշխատանքները, որոնք իրականացվում են այլ աղբյուրներից մուտք գործած ֆինանսների միջոցներով: Քոլեջի շենքը գազաֆիկացված էր և գործում էր լոկալ ջեռուցման համակարգ: Եռահարկ շենքի երրորդ հարկի ջեռուցումը իրականացվում է էլեկտրական տաքացուցիչներով: Նախատեսվում է Քոլեջի բակային հատվածը բարեկարգել

և վերածել մշակութային այգու, որտեղ կանցկացվեն նաև «Գեղանկարչություն» և «Դիզայն» մասնագիտության ուսանողների պլեներային դասընթացները:

Քոլեջում ֆինանսական հոսքերի կառավարումը և վերահսկողությունը իրականացնելու նպատակով կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո փաստացի տվյալների վերլուծությունների հիման վրա ներկայացվում է տարեկան բյուջի կատարողականը:

2023թ.-ի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով ընթացիկ եկամուտներում գերակշիռ մաս է կազմում պետական ֆինանսավորումը՝ կազմելով 95.23%-ը, մնացած 4.77 %-ը կազմում են ուսման վարձավճարներից մուտքերը՝ ձևավորելով արտաբյուջեն: Ընդհանուր բյուջեի 88,20%-ն ուղղվում է աշխատավարձերին, 5.88 %-ը՝ կրթաթոշակներին, 5.62 %-ը ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը, 0.3%՝ այլ ծախսերին: Քոլեջը հնարավորություն ունի դրամական մուտքեր ապահովել՝ իրականացնելով կարճաժամկետ ծրագրեր:

Ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները: Գործընթացները ապահովվում են հաշվապահները (Քոլեջի հաստիքացուցակով /01.03.2023 դրությամբ/ առկա է գլխավոր հաշվապահ և հաշվապահ): Քոլեջն ունի «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն», «Հաշվապահական կանոնակարգ», սակայն պետք է նշել, որ ֆինանսական միջոցների բաշխումը արտացոլված չէ այդ փաստաթղթում: Փորձագիտական այցից պարզ դարձավ՝ ֆինանսական միջոցները բաշխվում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝ կազմվում է բյուջեի նախագիծը՝ հիմքում ունենալով հաշվարկած եկամուտները, ընդհանուր ծախսերը, և քոլեջի ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը: Կատարվող բոլոր տեսակի ծախսերը միտված են Քոլեջի հիմնական գործունեության՝ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Քոլեջում կրթական գործընթացի համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը կատարվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն: Քոլեջը յուրաքանչյուր տարվա սկզբին կազմում է գնումների պլան, որը ներառում է առաջիկա ուստարվա համար պահանջվող ռեսուրսները: Ռեսուսների բաշխումը նախատեսվում և իրականացվում է տարեկան կտրվածքով, քանի որ յուրաքանչյուր ուսումնական տարի ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հատկացված լիցենզավորման տեղերի քանակի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ փոփոխություններ չեն լինում:

Քոլեջում 2013 թվականից գործում է փաստաթղթաշրջանառության Mullberry համակարգը, որով իրականացվում է արտաքին հաղորդակցումը: Քոլեջն ունի պաշտոնական էլեկտրոնային փոստ, ֆեյսբուքյան էջ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում տեղեկատվությունը հիմնականում տարածվում է viber ծրագրի միջոցով:

ԱԲՊՔ-ն ունի «Քոլեջի սանիտարա-հիգիենիկ նորմեր, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի նորմեր» փաստաթուղթը, ինչպես նաև առողջապահության և անվտանգության պահպանման անձնակազմ (զինղեկ և

քաղպաշտպանության շտաբի ղեկավար, հերթապահ պահակներ, բուժքույր)։ Քոլեջի տարածքը ցանկապատված չէ։ Քոլեջի մուտքն ու ելքը վերահսկում են հերթապահ պահակները։ Քոլեջի մուտքը չունի թեքահարթակ, շենքային պայմանները հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ ուսանողների համար, թեպետ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մինչ այսօր հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողներ Քոլեջը չի ունեցել։

Մասնաշենքերի բոլոր հարկերի տեսանելի վայրերում փակցված են տարհանման սխեմաներ, միջանցքներում առկա են կրակմարիչներ։ Քոլեջում գործում է ներքին հսկողության տեսահամակարգ, որի ներդրմամբ կարգավորվում են ներքին կարգապահական կանոնները, ինչպես նաև օտար մարդկանց մուտքը Քոլեջ։ Քոլեջում իրականացվում է շուրջօրյա հերթապահություն, որի համար կազմված է աշխատանքային գրաֆիկ։

Քոլեջն ունի բուժկետ, որը հագեցած է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով և նյութերով։ Քոլեջն ունի ճաղավանդակներով կառուցված ուսումնական զենքի պահոց, որի անվտանգությունը ապահովված էր։

Քոլեջում ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների կիրառելության, հասանելության և արդյունավետության գնահատման մեխանիզմները բացակայում են։

Դատողություններ։ Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը 2021-2026թթ. ՌԾ-ում նպատակադրել է նյութատեխնիկական բազայի համալրումն ու լսարանների արդիականացումը։ Ռեսուրսների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ Քոլեջն ընդհանուր առմամբ իր ՄԿԾ-ներն իրականացնելու համար ունի համապատասխան միջավայր՝ մասնագիտական լսարաններ, արհեստանոցներ, կահավորանք, լաբորատորիաներ, որոնք ներկայումս բավարար են կրթական ծրագրերի իրականացման համար։

Փորձագիտական խումբը դրական է համարում Քոլեջի տնօրենի գործադրած ջանքերը ուղղված շենքային պայմանների բարելավմանը, ռեսուրսների ձեռքբերմանը, ինչը կրում է շարունակական բնույթ։ Ռեսուրսների մեծ մասը ձեռք է բերվել Քոլեջի ղեկավարության անձնական կապերի արդյունքում։ Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը առաջնահերթ է համարում նաև ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացումը, որը կնպաստի ֆինանսական կայուն աճին։

Դրական է գնահատվում նաև «Ոսկերչություն» մասնագիտության շրջանակներում «ԷՅ ԴԻ ԷՄ ԴԱՅՄՈՆԴՍ» ՍՊԸ-ի հետ համագործակցությունը, ինչի արդյունքում Քոլեջը մինչև 2023թ.-ի տարեվերջ կվերազինվի նոր ժամանակակից սարքավորումներով, ինչն էլ կնպաստի ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը։

Որակյալ կրթություն իրականացնելու համար շատ ռեսուրս են պահանջում «Դիզայն» և «Գեղանկարչություն» միջին մասնագիտական կրթական ծրագրերը։ Քոլեջն այդ ՄԿԾ-ների իրականացման համար ապահովում է անհրաժեշտ պայմաններ, որոշ ռեսուրսներ լրացվում են ուսանողների և դասախոսների ջանքերով։

Դրական է, որ Քոլեջը համագործակցում է «Սմարթ հիմնադրամ»-ի հետ, ինչի արդյունքում ձեռք է բերել Սմարթ գրադարանը, որն ապահովված է ժամանակակից ինտերիերով, ընթերցասրահով, հայկական և արտասահմանյան դասական և ժամանակակից գրականությամբ, սակայն մտահոգիչ է, որ գրադարանում գրեթե բացակայում է մասնագիտական նոր գրականությունը:

Փորձագիտական խումբը կարևորում է լաբորատորիաների ստեղծման անհրաժեշտությունը Ֆիզիկա և Քիմիա առարկաների համար, ինչպես նաև լաբորատոր աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ հումքի ձեռքբերումը: Հագեցված լաբորատորիաները կնպաստեն սովորողների մոտ այդ առարկաներով նախատեսված կարողությունների ձևավորմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջի միջավայրը ընդհանուր առմամբ անվտանգ է, միևնույն ժամանակ նշում է, որ շենքային պայմանները հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ ուսանողների համար: Դրական է, որ առողջապահական և անվտանգությանն ուղղված ծառայություններից գործում է բուժկետը՝ առանձնացված տարածքով, պահակակետով, ներքին հսկողության տեսահամակարգով:

Փորձագիտական խումբը կարևորում է ներքին շահակիցների կարիքների վերհանման, մասնավորապես հարցումների իրականացման հստակ և պարբերական մեխանիզմների ներդրումը, որը կարող է նպաստել նյութատեխնիկական բազայի թիրախային և արդյունավետ պլանավորմանը, ինչպես նաև դրանց շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ-ում կրթական ծրագրերի իրականացման համար ձևավորված է բարենպաստ ուսումնական միջավայր, վերջին տարիներին իրականացվել են շենքերի բարեկարգման և ռեսուրսների համալրման աշխատանքներ, որոնք կրում են շարունակական բնույթ, իրականացվող ծախսերը միտված են Քոլեջի հիմնական գործունեության՝ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը, ներքին շահակիցների համար առկա է անվտանգ և ապահով միջավայր, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7- ի պահանջներին գնահատում է բավարար:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Քոլեջում գործում են ներքին և արտաքին հաշվետվողականության մեխանիզմներ, սակայն հաշվետվողականության կարգը բացակայում է: Ստորաբաժանումների աշխատանքը կարգավորող առանձին փաստաթղթերում («Մանկավարժական խորհրդի կանոնակարգ», «Կարիերայի կենտրանի կանոնակարգ», «Արխիվի կանոնակարգ», «Գրադարանի կանոնակարգ», «Որակի ներքին ապահովման կանոնակարգ» և այլն), առկա են կետեր, որոնցով նախատեսվում է հաշվետվության ներկայացում ղեկավար մարմնին:

ԱԲՊՔ-ի տնօրենը՝ սահմանված կարգի համաձայն, տարեկան 2 անգամ հաշվետվություն է ներկայացնում Կառավարման խորհրդին, որի կողմից գնահատվում է տնօրենի և քոլեջի ֆինանսական հաշվետվությունները՝ ֆինանսական եկամուտների և ծախսերի վերաբերյալ, որոնք հետագայում ներակայցվում են ՀՀ ԿԳՄՄՆ: Քոլեջի Կարիերայի կենտրոնի կողմից իրականացված հաշվետվությունները շրջանավարտների տեղաշարժի վերաբերյալ ևս ներկայացվնում են ՀՀ ԿԳՄՄՆ յուրաքանչյուր տարին մեկ անգամ: Մշակված ձևաչափի համաձայն քոլեջը լիազոր մարմին է ներկայացնում գործունեության ֆինանսական ցուցանիշները, ուսանողների շարժը, ընդունելության արդյունքները, դասախոսական անձնակազմի որակավորման, ստաժի և վարած դասընթացի մասին տեղեկատվություն: Ինքնավերլուծության համաձայն՝ «Հաշվետվությունների արդյունքում լիազոր մարմնի կողմից վեր են հանվում քոլեջի խնդիրները, որոշվում է քոլեջի ռիսկայնությունը»: Ռիսկայնության դեպքում ՀՀ Կրթության տեսչությունը ստուգումներ է իրականացնում:

Ինքնավերլուծության համաձայն՝ «. . . ամբիոնների դասալսումների, հարցումների, քննարկումների արդյունքում բացահայտված խնդիրներին լուծում տալու համար կադրերի բաժինն իր տարեկան հաշվետվության մեջ ներառում է նաև այն դասախոսների ցանկը, որոնց պարտադիր վերապատրաստման արդյունքում կբարելավվի կրթության որակը», սակայն փորձագիտական այցից, փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ներկայացված հաշվետվություններում դրանք բացակայում են:

Քոլեջը չունի կայքէջ: Գործունեության թափանցիկությունն ապահովելու համար քոլեջը հրատարակում է տեղեկատվական սեղմագրեր, բուկլետներ, թափուր աշխատատեղերի հայտարարություններ: Քոլեջի ֆեյսբուքյան էջն ունի 3500-ից ավելի հետևորդ: Էջում լուսաբանվում են կազմակերպվող դասընթացների, միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն և նորություններ, հայտարարություններ, քոլեջին առնչվող այլ գործընթացներ:

ԱԲՊՔ-ն փորձում է ապահովել հասարակության հետ հետադարձ կապը: Հետադարձ կապն ապահովվում է սոցցանցերի և էլեկտրոնային փոստի միջոցով: ԱԲՊՔ-ն ունի կնքված պայմանագրեր գործատուների հետ, որոնք նպաստում են պրակտիկաների կազմակերպմանը և ուսանողների հետագա մասնագիտական առաջխացղացմանը: Պրակտիկայի շրջանակում այցեր են կազմակերպվում նաև քաղաքապետարան: Այցեր է կազմակերպում Աբովյան քաղաքի հանրակրթական դպրոցներ, հասարակական կազմակերպություններ: Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ՝ մշակութային, սպորտային բնույթի: Քոլեջը սերտ կապեր է պահպանում

նաև այն համալսարանների հետ, որոնք ապահովում են իր ուսանողների կրթության շարունակականությունը:

Ըստ Ինքնավերլուծության՝ «Քոլեջի տարբեր ստորաբաժանումներ ունեն հասարակական ծառայությունների մատուցման գործառույթներ. (օրինակ՝ գործատուների հետ կապերի և կարիերայի զարգացման կենտրոնը, կադրերի բաժինը, ընդունող հանձնաժողովը, ուսումնական մասը և այլն): Ներկայացված բոլոր ստորաբաժանումները պարբերաբար իրականացնում են խորհրդատվություն՝ հասարակական տարբեր խմբերի համար»: Սակայն փորձագիտական այցի ընթացքում տարբեր շահակիցների հետ հանդիպումներից հետո այդ տեղեկատվությունը չհաստատվեց: Ավելին, պարզվեց, որ Քոլեջը չի կազմակերպում կարճաժամկետ դասընթացներ, հասարակությանը նմանատիպ ծառայություններ չի մատուցում: Նախատեսվում է կազմակերպել ցուցահանդեսներ և այլ մշակութային միջոցառումներ: 2023 թ. հուլիսին Քոլեջում կազմակերպվել է «Գեղանկարչություն» մասնագիտության ուսանողների հեղինակած նկարների ցուցահանդեսը: Ցուցահանդեսը կազմակերպվել էր «Սմարթ» հիմնադրամի և «Ամերիկայի խորհուրդների գրասենյակի»-ի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում:

Դատողություններ: ԱՊԲՔ-ում առկա են հաշվետվողականության այն մեխանիզմները, որոնք պահանջում է լիազոր մարմինը՝ տնօրենի տարեկան, ֆինանսական հաշվետվությունը, կարիերայի պատասխանատուի հաշվետվությունը: Առկա են նաև որոշ ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները, սակայն ուսումնասիրելով դրանց բովանդակությանը, փորձագետների մոտ կածիք ձևավորվեց, որ դրանք չեն կարող կիրառվել, որպես արդյունավետ կառավարման գործիք, քանի որ համահունչ չեն ՌԾ նպատակներին և խնդիրներին, չունեն վերլուծական բնույթ, հետևաբար չեն կարող նպաստել թույլ կողմերի և թերացումների վերհանմանն ու բարելավմանը: Փորձագիտական խումբը իր մտահոգությունն է հայտնում այն մասին, որ հաշվետվողականության քաղաքականության բացակայության պայմաններում չի ապահովվում վերևից ներքև տեղեկատվության փոխանցումը: Այցի շրջանակներում տարբեր շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նրանք Քոլեջի շատ գործընթացներից անտեղյակ են: Կայքի բացակայության պայմաններում Քոլեջի տեղեկատվական ծածկույթը սահմանափակ է, թեև ակտիվորեն օգտագործում է ֆեյսբուքյան հարթակը: Քոլեջն իր այս տիրույթի բացերը կապում է հիմնականում ֆինանսական սուղ պայմանների հետ, բայց միաժամանակ քոլեջը բավարար չափով չի օգտագործում տեղեկատվության տարածման այլ հնարավորությունները: Օրինակ՝ կա անվճար կայք ունենալու հնարավորություն, ինչի մասին քոլեջը տեղյակ չէր:

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապը մեծապես ապահովվում է տնօրենի անձնական կապերի շնորհիվ, միևնույն ժամանակ, դրանց համար կայուն մեխանիզմները բացակայում են: Դրա հետևանքով չկան միջոցառումների, կապի ապահովման այլ միջոցների հստակ պլանավորում:

Ուսումնական հաստատության հասարակական պատասխանատվությունը գործընթաց է, որի ընթացքում հասարակությանը փոխանցվում են որոշակի արժեքներ,

մշակութային նորմեր, գիտելիքներ: Քոլեջը դրանով սոցիալ-մշակութային կապիտալի ներդրում է անում իր համայնքում: Չնայած քոլեջը որոշակի կապեր ունի Աբովյանի քաղաքապետարանի հետ, այդուհանդերձ քոլեջում բացակայում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմները: Օրինակ՝ քոլեջը կարող էր ծառայություն մատուցել Աբովյան քաղաքին և «Դիզայն» և «Գեղանկարչություն» կրթական ծրագրերում սովորողները կարող էին մասնակցել բակերի և զբոսայգիների բարեկարգմանը քաղաքի դալանների նկարազարդմանը, «Դերասանական արվեստ» ՄԿԾ սովորողները կարող էին բարեգործական ներկայացումներ տալ մերձակա գյուղերում և այլն: Այդ ծախսերը կարող էր հոգալ խոշորացված համայնքը, իսկ քոլեջը մշակութային ծառայություն մատուցելով կբարձրացներ իր հեղինակությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ-ում շահակիցների նկատմամբ հաշվետվողականության մեխանիզմը լիարժեք չէ, հաշվետվությունները վերլուծական չեն, քոլեջը բավականաչափ չի ապահովում գործընթացների թափանցիկությունը, հասարակությանը մատուցվող ծառայությունները դեռ բարելավման և բարեկարգման կարիք ունեն՝ հատկապես գիտելիքի (արժեքների) տարածման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊԲՔ-ն չի բավարարում Չափանիշ 8-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: ՄՈՒՀ-ում արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն և ընթացակարգեր, առանձնացված ենթակառուցվածք առկա չէ: Արտաքին կապերը և համագործակցությունները համակարգվում են տնօրենի, դաստիարակչական աշխատանքերի գծով տնօրենի տեղակալի, Կարիերայի և պրակտիկայի պատասխանատուի կողմից: Փորձագիտական ուսումնասիրությունների համաձայն՝ համագործակցությունները կազմակերպվում և իրականացվում են գործընկերներ ներգրավելու, ուսումնառության համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման, ուսանողների պրակտիկաների անցկացման, բարերարների կողմից ներդրումների համար: Դրանց շնորհիվ ԱԲՊՔ-ն կարողանում է կազմակերպել սովորողների արտադրական և նախաավարտական պրակտիկաները, առկա են համապատասխան բազաներ, հաճախ հենց պրակտիկաների իրականացման ընթացքում սովորողները ձեռք են բերում աշխատանք իրենց մասնագիտական ոլորտներում: Մասնավորապես՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության սովորողները պրակտիկան անցկացնում են Աբովյանի զբաղվածության

կենտրոնում, «Յունիթի Էվոլուշն Սիսթեմս» ՍՊԸ-ում, «Էֆ Նեթ» ՍՊԸ-ում, «Աբով» ՍՊԸ-ում, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության սովորողները՝ «Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպությունում, «Արփիմեդ» դեղագործական կազմակերպությունում, Բյուրեղավանի համանքային «Բարեկարգում և կանաչապատում» ՀՈԱԿ-ում, Աչալուրջի համայնքապետարանում, «Դայմեքս» ՍՊԸ-ում, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ում, «Սարանիստ» ՍՊԸ-ում, «Թամարա» ՍՊԸ-ում, «Զբոսաշրջության» մասնագիտության սովորողները պրակտիկան անցկացնում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում, «Մարրիոթ Ծաղկաձոր» հյուրանոցային համալիրում, «Արզնի առողջարան» ՓԲԸ-ում, «Էդնա տուր» ՍՊԸ-ում, «Բանկային գործ» մասնագիտության սովորողները՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում, «Ակբա բանկ» ԲԲԸ-ում, «VTB–Հայաստան բանկ» ՓԲԸ-ում, «Դիզայն» մասնագիտության սովորողները՝ «ԱՐՏ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ում, Երևանի Կենդանաբանական այգում, «Գեղանկարչության» մասնագիտության սովորողները՝ Երևանի կենդանաբանական այգում, Աբովյանի գեղարվեստի դպրոցում, «Քույարական գործ» մասնագիտության սովորողները՝ «Աբովյանի ծննդատուն» ՓԲԸ-ում, «Ապահովագրական գործ» մասնագիտության սովորորդները՝ «Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ում, «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության սովորողները՝ Աբովյանի համանքապետարանում և այլն: «Սմարթ» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում քոլեջում ստեղծվել է «Սմարթ» գրադարան, որտեղ կազմակերպվում են դասընթացներ, սեմինարներ արտաքին շահակիցների և ուսանողների համար: «Սմարթ» հիմանդրամը նաև աջակցում է անվճարունակ ուսանողների վարձավճարների փոխհատուցմանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ արտաքին համագործակցությունները նպաստել են նաև հաստատության ռեսուրսային բազայի բարելավմանը, ուսումնառության համար անհրաժեշտ գույք է ձեռք բերվել, բարեկարգվել են շենքային պայմանները: Հարկ է նշել, որ արտաքին համագործակցությունները տեղի են ունենում հաստատության տնօրենի և մասնավոր դեպքերում որոշ աշխատակիցների անձնական նախաձեռնությամբ և կապերով, կանոնակարգված հստակ և կայուն հիմքեր առկա չեն:

Կապը այլ քոլեջների հետ ավելի թույլ է, թեպետ, առկա են նաև դրական օինակներ, մասնավորապես, համաձայն ինքնավերլուծության, համագործակցելով Երևանի պետական ինֆորմատիկայի քոլեջի ամբիոնների վարիչների հետ, և հաշվի առնելով նախորդ տարվա «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության պետական որակավորող հանձնաժողովի նախագահի առաջարկը, քննարկվել և որպես պետական ամփոփիչ ատեստավորում ընտրվել է մեկ պետական քննություն: Հատկանշական է նաև, որ արտաքին կապերը նպաստում են քոլեջում գործատու դասավանդողների ներգրավմանը, մասնավորապես «Քույրական գործ» և «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների շրջանակներում: Արտաքին կապերի շնորհիվ ուսանողները հնարավորություն են ստանում ճանաչողական այցեր իրականացնել, մասնավորապես՝ Ազգային ժողով, Կենտրոնական բանկ և այլն: Հաստատված արտաքին համագործակցության

արդյունքում քոլեջը ներդրել է նոր՝ «Ոսկերչություն» կրթական ծրագիր, որի իրականացման համար գործատուն տրամադրել է համապատասխան ռեուրսներ:

Քոլեջը միջազգայնացման առանձնացված քաղաքականություն, ընթացակարգ, համագործակցություններ չունի, և, ինչպես պարզ դարձավ փորձագիտական այցից, միջազգայնացումը դեռևս քոլեջի նպատակների տիրույթում չէ, թեև ԱԲՊՔ-ի առաքելության շրջանակում է տաղանդավոր, ընդունակ, խելացի ուսանողների հետագա ուսուցումը նաև արտերկրում շարունակելը և ժամանակակից միջազգային ձեռքբերումներին հաղորդակից լինելը: Քոլեջը չունի հատուկ քաղաքականություն դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության բարձրացման ուղղությամբ: Օտար լեզվի խորացված ուսուցումն իրականացվում է միայն «Գործավարություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների համար:

Դատողություններ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ ՄՈՒՀ-ի արտաքին կապերը արդյունավետ են, քանի որ նպաստում են ուսումնառության և կրթական ծրագրերի համար անհրաժեշտ միջավայրի և ռեսուրսների ձեռքբերմանն ու շարունակական բարելավմանը, սովորողների արտադրական և նախաավարտական պրակտիկաների համար անհրաժեշտ բազաների ապահովմանը, ինչը նպաստում է սովորողների գործնական հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Գովելի է, որ արտաքին համագործակցության շնորհիվ քոլեջի տնօրենը հավելյալ ներդրումներ է ապահովել: ԱԲՊՔ-ի կապն այլ քոլեջների հետ համեմատաբար թույլ է, մինչդեռ այլ քոլեջների լավագույն փորձի ուսումնասիրությունը գործընթացների շարունակական բարելավման տեսանկյունից շահեկան կլիներ քոլեջի համար:

Փորձաագիտական խումբը դրական է համարում արտաքին կապերի շնորհիվ գործատու և մասնագիտական ոլորտում աշխատող դասավանդողների ընդգրկումը, ինչը ամրապնում է կրթություն-աշխատաշուկա կապը, հիմքեր ստեղծելով կրթական ծրագրերում գործնական կարողությունների և աշխատաշուկային համահունչ գիտելիքների ձևավորման համար:

Գովել է նաև ԱԲՊՔ բազմազան և բազմաբնույթ արտաքին կապերը, որոնց շնորհիվ քոլեջը նպաստում է սովորողների համակողմանի զարգացմանը, քաղաքացիական դաստիարակությանը:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ քոլեջը դիտարկի միջազգային կառույցների և քոլեջների հետ համագործակցությունների մեկնարկը, որը կնպաստի ինչպես ռեսուրսների համալրմանը, այնպես էլ կիթության բովանդակության արդիկանացմանը: Այս տեսանկյունից կարևոր է, որ քոլեջը առաջնահերթ աշխատանքներ իրականացնի ներքին շահակիցների լեզվաիմացության բարելավվման ուղղությամբ:

Եզրակացություն: Հաշվի առնելով, որ քոլեջը ունի համագործակցությունների լայն շրջանակ, արտաքին հարուստ կապերի միջոցով նպաստում է քոլեջի զարգացմանը, ուսանողների մասնագիտական աճին և առաջընթացին, դրա արդյունքում բարելվվել են

ռեսուրսները փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է 9-րդ չափանիշի պահանջներին:

Եզրահանգում: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Քոլեջը 2021-2026թթ. ՌԾ-ում նախատեսել է (նպատակ 8) ունենալ որակի ապահովման համակարգի մշակում, ներդնում և զարգացում: Նպատակի իրագործման համար սահմանել է հետևյալ խնդիրը՝ Քոլեջի որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի և ռազմավարական ծրագրի մշակում:

Քոլեջն ունի «Որակի նեքրին ապահովման կանոնակարգ»: Համաձայն կանոնակարգի Քոլեջը պետք է ունենա Որակի ապահովման կենտրոն, որի նպատակն է կատարել ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների գնահատում, ապահովել դրանց որակի վերահսկում, հաշվետվողականություն և թափանցիկություն, նպաստել շարունակական բարելավմանն ու զարգացմանը: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջը չի ստեղծել Որակի ապահովման կենտրոն, կա միայն պատասխանատու:

Քոլեջը կրթության որակի ապահովման հաստիք ներդրել է դեռևս 2019 թվականից սկսած: Մինչ այսօր Քոլեջն ունեցել է երեք որակի պատասխանատու: Կրթության որակի պատասխանատուի համար Քոլեջը չի սահմանել պաշտոնի անձնագիր, որտեղ ամրագրված կլինեին հաստիքը զբաղեցնող անձի պարտականությունները և գործառույթները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կրթության որակի պատասխանատուները չեն ունեցել և չունեն աշխատանքային պլաններ, հետագա աշխատանքները դեռևս պլանավորված չեն, հստակ չէ նաև որակի ապահովման աշխատանքների զարգացման ուղղությամբ Քոլեջի տեսլականը: Քոլեջի պատկերացումները թույլ են նաև Որակի կառավարման՝ ՊԻԳԲ շրջափուլի վերաբերյալ: Որակի ապահովման համակարգի գործունեության վերաբերյալ Քոլեջն ունի հետևյալ դիտարկումները՝ ուսանողների առաջադիմության հետևողականություն, դասալսումների իրականացում: Վերոնշյալ դիտարկումներից բացի կրթության որակի պատասխանատուները այլ գործառույթներ չեն իրականացրել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներքին և արտաքին շահակիցները նույնպես իրազեկված չէին որակի ապահովման համակարգից:

Արտաքին գնահատման նպատակով ինստիտուցիոնալ մակարդակում տեղեկատվության հավաքագրման առաջին փորձը կատարվել է ինստիտուցիոնալ

կարողությունների ինքնավերլուծության ժամանակ: Տվյալների և հետազոտությունների արդյունքների պակասի հետևանքով ինքնավերլուծությունը նկարագրական է ստացվել, ընդհանրական, հաճախ տեղեկատվությունը չի բխել չափորոշչից: Ինքնավերլուծությունում SWOT վերլուծությունները հստակ պատկեր չէին ապահովում հաստատության գործունեության մասին, ինչը փորձագիտական խմբին թույլ չի տվել նախնական գնահատման ընթացքում վեր հանել Քոլեջի առանձնահատկությունները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինքնավերլուծություն իրականացրած խումբը (ուսումնական մասի վարիչ, 1 դասախոս, 1 ուսանող, տնօրենի օգնական) լիարժեք պատկերացում չունեն որակի ապահովման համակարգի վերաբերյալ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի որակի ապահովման համակարգը դեռևս չի ներդրվել, բացակայում են որակի ապահովման բազմաթիվ մեխանիզմներ և գործիքներ, շահակիցները տեղեկացված չեն որակի ապահովման գործընթացների վերաբերյալ և ընդգրկված չեն ՈԱ գործընթացներում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ որակի ապահովման համակարգի ներդրման համար Քոլեջը մշակել է որակի ներքին ապահովման կանոնակարգ, այնուամենայնիվ մշակված փաստաթուղթը դեռևս չի կիրառվել, ինչը վտանգում է ՈԱ համակարգի ներդրումն ու կայացումը: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ Քոլեջը դեռևս 2019 թվականից ունեցել է կրթության որակի հաստիքը զբաղեցնող անձ, սակայն մինչ օրս որակի ապահովման համակարգի ներդրման և կայացման ուղղությամբ քայլեր չեն արվել:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը հրատապ քայլեր ձեռնարկի որակի ապահովման համակարգի ներդրման ու կայացման համար: ՈԱ համակարգի ներդրումը քոլեջին հնարավորություն կտա քոլեջի զարգացմանը խանգարող մարտահրավերների բացահայտման և տվյալների հիման վրա որոշումների կայացման, քոլեջում առկա բոլոր գործընթացների շարունակական և համակարգված բարելավմանը: Այս տեսակետից կարևոր է ՈԱ պատասխանատուի կարողությունների զարգացումը, որակի ապահովման գործընթացների կանոնակարգումը, պլանավորված գործընթացների իրականացումը, ներքին ու արտաքին շահակինցերի շրջանում որակի ապահովման գործընթացների իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև տվյալների հավաքագրման մեխանզիմների ներդրումը, որոնք էլ կնպաստեն որակի մշակույթի ստեղծմանը:

Փորձագիտական խումբը նշում է, որ որակի ապահովման գործընթացների մասին ներքին շահակիցների շրջանում ոչ իրազեկված լինելը խոչընդոտ է հանդիսանում որակի մշակույթի ներդրման և տարածման գործում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱԲՊՔ-ի որակի ապահովման ներքին համակարգի վերաբերյալ դեռևս առկա չեն հստակ պատկերացումներ, որակի ապահովման պատասխանատուի գործառույթներ սահմանված չեն, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածություն առկա չէ, տվյալների հավաքագրման, գործընթացների արդյունավետության գնահատման, վերլուծությունների, խնդիրների վերհանման

մեխանիզմները բացակայում են, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Աբովյանի բազմագործառության պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ամսաթիվ՝ 29.11.2023

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Լիլիթ Զաքարյան** 1988 թ. ավարտել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարաժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետում, ստանալով պատմություն և սովետական իրավունք ուսուցչի որակավորում: 1993 թ-ին ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2008 թ-ին՝ պատմության մասնագիտության դոցենտի գիտական կոչում: Գիտական հետազոտությունների շրջանակը ընդգրկում է Հայաստանում քաղաքական համակարգի փոխակերպումները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման, կրթության համակարգի զարգացման պատմությունը: Դասավանդել է Հյուսիսային համալսարանում, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարաժական համալսարանում, Սլավոնական համալսարանում: Հյուսիսային համալսարանում Իրավաբանական և լրագրության դեպարտամենտի դեկան, Լրագրության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, Ուսումնական վարչության պետ, հիմնադրել է և ղեկավարել Որակի ապահովման վարչությունը: 2015-2020 թթ. աշխատել է ՈԱԱԿ-ում: Այժմ աշխատում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ղեկավարում է Որակի գնահատման և ապահովման կենտրոնը:

2. **Մարինե Գալուբյան** 2004-2008թթ սովորել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ մաքսային գործ կրթական ծրագրով: 2010թ-ին ավարտել է Գիտությունների ազգային ակադեմիայի ֆինանսներ մագիստրոսական ծրագիրը: Աշխատում է Սանարե-ֆարմ ՍՊԸ-ում՝ որպես հաշվապահ: 2021թ-ից Արտաշատի №3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ է, 2020-2022թթ. զբաղեցրել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Կրթության որակի պատասխանատուի հաստիքը: 2013-2020թթ-ին աշխատել է նույն քոլեջում՝ որպես Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս:

3. **Լիլիթ Աբելյան** 2009 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը: Ստացել է ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2017 թ. ավարտել է նույն համալսարանը և ստացել մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ «Պատմություն» մասնագիտությամբ: 2016 թ–ից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դասախոս է: 2020 թ-ից մինչ այժմ Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատուն է:

4. **Ռոբերտ Գրիգորյան** 2021 թվականից սովորում է Հայաստանում ֆրանսիական քոլեջի «Ծրագրավորում» մասնագիտության 4-րդ կուրսում: 2023-ին մասնակցել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

18.09.2023թ.-21.09.2023թ.

	18.09.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	14:30	15:30	60 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	15:40	16:40	60 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	16:50	17:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	18:00	19:00	60 րոպե

	19.09.2023թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների, ներառյալ Հանրակրթ.ծրագր. բաժնի ղեկավարի, ցիկլային հանձնախմբերի ղեկավարների հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Դասալսումներ	11:10	12:10	60 րոպե
4.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչներիհետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	12:20	13:20	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
6.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:40	15:40	60 րոպե
7.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի ուղղ. պատ., պրակտիկայի բաժնի վարիչ, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, կադրերի տեսուչ)	16:50	17:50	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	18:00	19:00	60 րոպե

	20.09.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
2.	Հանդիպում «Բանկային գործ» կրթական ծրագրի պատասխանատո ւի և դասախոսն երիհետ	Հանդիպում «Դիզայն»կրթական ծրագրի պատասխանատուի նդասախոսների հետ	Հանդիպում «Գործավարություն օտար լեզվի խորացված իմացությամբ » կրթական ծրագրի պատասխանատո ւի և դասախոսների	10:00	11:20	80 րոպե
3.	Հանդիպ ում Հանդիպ ում «Բանկային գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ(10-12 հոգի)	Հանդիպում «Դիզայն»կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Գործավարութ յունօտար լեզվի խորացված իմացությամբ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	11:30	12:30	60 րոպե
4.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			12:40	13:20	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60 րոպե
6	Ռեսուրսների դիտարկում			14:40	15:40	60 րոպե
7.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			15:50	16:30	40 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:40	19:00	140 րոպե

	21.09.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում փորձա.խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:10	12:00	50 րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	12:10	13:00	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	17:30	190 րոպե
6.	Հանդիպում ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ կատարողական՝ ըստ տարիների: Կամ՝ նախորդ ռազմավարական շրջափուլի արդյունքները:	1
2.	ՌԾ-ի պլան ժամանակացույցներ /և՛ նախորդ ՌԾ-ի, և՛ նոր ՌԾ-ի/:	1
3.	Ներքին և արտաքին շահակիցների կարքիների վերհանման հարցումների, վերլուծությունների փաթեթներ 2020-2021, 2021-2022, 2022-2023 ուստարիների:	1
4.	ԿԽ-ի, Մանկխորհի արձանագրություններ:	1
5.	2020-2021,2021-2022, 2022-2023 տարեթվերի բոլոր ստորաբաժանումների աշխատանքային պլաններ, հաշվետվություններ:	1
6.	Տնօրենի կամ վարչական կազմի տարեկան հաշվետվություններ, աշխպլաններ:	1
7.	Ստորբաաժանումների կանոնակրգեր, պաշտոնի անձնագրեր:	2
8.	Կառավարման, տնօրենական, մանկավարժական, ուսումնամեթոդական խորհուրդների անվանական կազմերը և նիստերի արձանագրություններ 2020-2021,2021-2022,2022-2023 ուստարիների	2
9.	Արձանագրություններ , որտեղ կերևան դասախոսներին կամ սանողներին առնչվող որոշումներ:	2
10.	Դասալսումների ուսումնասիրությունների օրինակներ:	2
11.	Հաշվետվություններ, խորհուրդների արձանագրություններ:	2
12.	Փոփոխված ՄԿԾ-ներ, դրանց վերաբերյալ արձանագրություններ:	2
13.	ՄԿԾ-ներին առնչվող փաստաթղթեր, որոնք մշակվել են քոլեջում:	3
14.	ՈՒսումնական պլանները, առարկայան/մոդուլային ծրագրերը/ՄԿԾ-ների փաթեթներ/:	3
15.	Մոդուլային ծրագրերի, քննարկումների և հաստատման օրակարգով ամբիոնների նիստերի արձանագրություններ, ուսումնամեթոդական խորհդրի նիստերի արձանագրություններ, ՄԿԾ-ների օրինակներ:	3
16.	Դասախոսների փաթեթեներ, /Պորտֆոլիոներ/ Առարկայական/մոդուլային ծրագրեր, թեմատիկ պլաններ, ուսումնառության նյութեր, ոսումնառության պլաններ, գնահատման թերթիկներ, հանձնարարականներ/ Քննական տոմսեր/ընթացիկ և պետական/, պրակտիկայի օրագրեր, պրակտիկայի հաշվետվություններ:	3
17.	Դիպլոմային նախագծերի օրինակներ, պետական ամփոփիչ ատեստավորման հարցաշարեր:	3

18.	Բողոքարկումների և վերահանձնումների համապատասխան փաստաթղթերը, ամփոփագրեր:	3
19.	Պրակտիկայի ամփոփաթերթեր, ղեկավարների առաջարկություններ:	3
20.	Գնահատման թերթիկների, հանձնարարականների օրինակներ:	3
21.	Շարժունության հիմքեր:	3
22.	Ուսանողների կարիքների վերհանման վերլուծություններ:	4
23.	Կուրսղեկների հաշվետվություններ, պլաններ, անհատական խորհրդատվությունների թեմաներ	4
24.	Կաբինետների աշխպլաններ, հաշվետվություններ, խորհրտավական պարապմունքների մասին տվյալներ, փաստաղթղթեր: Խորհրդատվական պարապմունքներից ուսանոնղների բավարավածության վերլուծություն:	4
25.	Գրադարանի աշխպլան կամ հաշվետվություն, ուսանողների կապը, ակտիվությունը :	4.7
26.	Կարիերայի պատասախանտուի աշխպլան, հաշվետվություններ, փաստաղթղթեր:	4
27.	Ուսխորհրդի աշխատանքների արձանագրություններ:	4
28.	Ուսանողնական հարցումների վերլուծություններ, հարցաշարեր:	4
29.	Ուսմասի հաշվետվություններ, դասալսումների արդյունքների վերլուծություններ:	4
30.	Դասախոսների բանավոր մրցույթի հարցաշարեր, հարցատոմսեր, արձանագրություններ:	5
31.	Տարիֆիկացիոն հանձնաժողովի կազմը, արձանագրություններ:	5
32.	<<Ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, խրախուսման/այդ թվում ֆինանսական շահադրդման / կամ պատասխանատվության ենթարկելու կանոնակարգը>>, Գնահատված դասախոսների փաստաթղթերը Դասալսումների վերլուծություններ Վերլուծությունների հիման վրա կայացված որոշումներ:	5
	Վերապատրաստում անցած մասնակիցների ցանկ, հավաստագրեր:	5
34.	Վերջին երեք տարիների վերապատրաստված դասախոսների ցանկ և թեմաներ:	5
35.	Դասախոսների գնահատման թերթիկների օրինակներ ուսանողների կողմից , ի՞նչ արդյունքներ կան դասախոսների գնահատումից, արդյո՞ք խնդիրներ դուրս են բերել ուսանողական հարցումները:	5
36.	33. Գործնական աշխատանքների օրինակներ:	6
37.	Պրակտիկայի օրագրեր, սովորողների անհատական աշխատանքների օրինակներ , պրակտիկայի բաժնի հաշվետվություններ, ուսպլաններ:	6
38.	Հաշվետվողականության սխեմա:	8
39.	Գործատուների հետ համագործակցության հուշագրեր:	8

40.	Պրակտիկայի բաժնի աշխպլան, հաշվետվություններ:	9
41.	Կարգում նշված գործողությունների ապացույցներ, օրինակ՝ ներքին կարգերի վերանայում:	10
42.	Հարցումների օրինակներ: Հարցումների, ֆոկուս-խմբերի քննարկումների վերլուծություններ, որոնցից դուրս են բերվել ներքին շահակիցների կարիքները:	10
43.	Որակի պատասխանատուի ուսումնասիրությունների արձանագրություններ կամ փաստաթղթեր, վերլուծություններ:	10
44.	Որակի պատասխանատուի աշխպլան, հաշվետվություններ, վերլուծություններ:	10
45.	Մշակված ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմներ ու համապատասխան փաստաթղթեր:	10
46.	Արձանագրություններ, հարցումների վերլուծություններ;	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ուսումնական 2 մասնաշենք
2. Լսարաններ
3. Առարկայական լսարաններ
4. Ստորաբաժանումներ
5. Խոհանոցային լաբորատորիա
6. Արհեստանոցներ /Նկարչական/
7. Մարզադահլիճ /Հանդերձարան/
8. Գրադարան
9. Բուժկետ
10. Պահակակետ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԱԲՊՔ** Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ
2. **ՊՈԱԿ** Պետական ոչ առևտրային կազմակերպություն
3. **ՀՀ ԿԳՄՍՆ** Հայաստանի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4. **ՈԱԱԿ** Որակի ապահովման ազգային կենտրոն
5. **ՄՈՒՀ** Մասնագիտական ուսումնական հաստատություն
6. **ՈԱՇ** Որակավորումների ազգային շրջանակ
7. **ՊԿՉ** Պետական կրթական չափորոշիչ
8. **ՄԿՈՒԶԱԿ** Մասնագիտական կրթության զարգացման ազգային կենտրոն
9. **ԻՎ** Ինքնավերլուծություն
10. **ՄԿԾ** Մասնագիտական կրթական ծրագիր
11. **ԿԾ** Կրթական ծրագրեր
12. **ՌԾ** Ռազմավարական ծրագիր
13. **ԶԾ** Զարգացման ծրագիր
14. **ՈԱԿ** Որակի ապահովման կենտրոն
15. **ԳԱՑ** Գնահատման առանցքային ցուցանիշներ
16. **ԿԽ** Կառավարման խորհուրդ
17. **ՈւԽ** Ուսանողական խորհուրդ
18. **ՄԽ** Մանկավարժական խորհուրդ
19. **ՏԽ** Տնօրինական խորհուրդ
20. **ՊԴԿ** Պրոֆեսորադասախոսական կազմ
21. **ՈՒԱ** Ուսումնական արդյունք